92[Կան6]
Ղ-23
2596
ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՍԱՀՈՒԵԼ ԿԱՌՏ
150

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока

Тип. 1-й Арт. Сов. Печ.—Зак. № 3113

Ֆ. ՊԱՈՒԼՍԷՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ

(ԱՐՏԱՏՊՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏԻՑ)

Փոխադրեց

ՄԵԼՔՈՆ ՔՐԻՇՃԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1904

нет

Գ-23

Ֆ. ՊԱՈՒԼՍԷՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ

(ԱՐՏԱՏՊՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏԻՑ)

Փոխադրեց

ՄԵԼՔՈՆ ՔՐԻՇՃԵԱՆ

2 ռ.

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1904

21x14

ՍՏՈՒԳՎԱԾ է
1952 թ.

1049

Дозволено цензурою 10 Іюня 1904 г. г. Тифлисъ.

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ[1]

(Մանուան հարիւրամեակի առթիւ)

Էմմանուէլ Կանտը ծնուել է 1724 թ. ապրիլի 22-ին Պրուսիայի Քէօնիգսբերդ քաղաքում։

Ինչպէս գերմանական ազգի մտաւոր-հոգևոր առաջնորդներից շատերը այնպէս էլ Կանտը հասարակ քաղաքացիական շրջանից է ծագում առել։ Իսկ իբրև փիլիսոփայ նա երրորդն էր հասարակ արհեստաւոր դասակարգին պատկանող. առաջինը Մելանխտոնն էր, մի հրացանագործի զաւակ, երկրորդը Վոլֆը՝ կաշեգործի, իսկ Կանտի հայրը Յովհաննէս Գէորգ՝ աննշան կարողութեան տէր մի թամբագործ էր։ Սոցա այս ծագումը չեչտւում է, որովհետև գերմանական փիլիսոփայութեան վրայ ունեցել է իւր ազդեցութիւնը։ ԺԷ և ԺԸ դարու գերմանական ու ֆրանսիական փիլիսոփաները մեծ մասամբ աշխարհիկ մարդիկ են եղել, բարձր հասարակութեան մէջ ապրող, անմիջապէս նորանով շրջապատուած, իսկ հեղինակութիւններն աւելի շուտ սալօնական զրոյցներ քան թէ փիլիսոփայութիւն։ Գերմանական փիլիսոփաները պրոֆեսորներ էին։ Նոցա գործունէութեան ասպարէզը—համալսարանն էր, գործելու միջոցը՝ դասախօսութիւն։ Նոցա բնորոշ գիծն էր—հասարակ բուրժուա մտածողութիւնը, իսկ շարադրութիւնների, գրուածքների մէջ՝ իշխում էր դպրոցական հրահանգիչ ձևը։ Այդ հասարակ բուրժուա մտածողութեան հետ սերտ կապ ունէր և նոցա վերաբերմունքը դէպի կրօնը։ Կրօնի վրայ նոքա նայում էին որպէս քաղաքական եկեղեցական ներկայացուցիչների զանազան հաշիւների ծառայող մի բանի վերայ, և կամ թէ չէ, որպէս գրական անձանց և ընթերցողների սրամտութեան առարկայի վրայ։ Կրօնը եթէ նոցա համար մի հետաքրքրութիւն ներկայացնում էր, այդ էլ որպէս ազգերի կեանքի բնապատմական (Naturhistorisches) մի երևոյթ. բայց երբէք նոցա չէր պատահում յարա-

---

1) Փոխադրուած է գերմանացի պրոֆեսոր Պաուլսենի «Immanuel Kant, sein leben und seine Lehre» գրքի ռուսերեն թարգմանութեան առաջին մասից.

բերութիւն ունենալ այնպիսի մարդկանց հետ, որոնց համար կրօնը էական, կենսական մեծ նշանակութիւն ունենար։

Կանտն ընդհակառակը ծնուեցաւ ու սնուեցաւ այս վերջին կարգի մարդկանց շրջանում։ Նորա ծնողները պատկանում էին այն ժամանակ մուտք գործած պիետիստական ուղղութեան, որ դէպի կրօնը ջերմ հետաքրքրութիւն էր զարթեցնում։ Այս պիետիստ կոչուածների մէջ ջերմեռանդութեան զգացմունքը չափազանցութեան և նոյն իսկ հիւանդ դրութեան էր հասնում։ Ինչպէս երևում է, առանձնապէս Կանտի մօր համար կրօնն ամենաբուռն զգացմունքմունքների կենտրոն էր։ Նորա մասին, Կանտն իւր ամբողջ կեանքի ընթացքում քաղցր յիշողութիւններ էր պահել, իսկ երբէք չանհետացաւ նորանից այն գիտակցութիւնը, թէ ինչով էր երախտապարտ իւր հայրենական տան։ Արդէն բաւականին ծերանալուց յետոյ, նա կրկին դառնում է պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը շրջապատող հանգամանքներին. նա գովում է այն բարոյական մթնոլորտը, որի մէջ սնուեցաւ ինքը, իւր ծնողաց իրենց պարտականութիւններին հաւատարմութեամբ վերաբերուելը, նոցա վերին աստիճանի բարեխղճութիւնն ու ջերմ բարեպաշտութիւնը։ «Եթէ այն ժամանակ» ասաց մի վիճաբանութեան մէջ Կանտը, «կրօնական ըմբռնումներն ու գաղափարները, առաքինութիւնն ու բարեպաշտութիւնն այնքան պարզորոշ չէին, դորա փոխարէն այդ յատկութիւններն իսկապէս գոյութիւն ունէին։ Պիետիզմի մասին ինչ էլ որ ասեն, այնուամենայնիւ անուրանալի է այն, որ նորանով ներշնչուած, տոգորուած մարդիկ աչքի էին ընկնում իրենց պատկառելի բնաւորութեամբ։ Նոքա օժտուած էին մարդուն մատչելի ամենավսեմ բարեմասնութիւններով. այն պարզութեամբ, հոգեկան այն անդորրութեամբ, որոնց առաջ ամենասաստիկ կրքերն անգամ պաղում, հանդարտում են։ Ոչ մի կարիք, ոչ մի հալածանք չէր ճնշում նոցա տրամադրութիւնը, ոչ մի ընդհարում նոցա մէջ չէր յարուցանում բարկութիւն կամ թշնամութիւն. մի խօսքով ամենահասարակ դիտողի մէջ անգամ նոքա յարգանք էին զարթեցնում։ Ես այժմ յիշում եմ, թէ ինչպէս միանգամ վէճ ծագեցաւ իրաւունքների համար թամբագործների և փոկագործների համարուեստախմբերի մէջ և որի մէջ սաստիկ տուժեց նմանապէս հայրս. սակայն չնայելով այդ վերջին հանգամանքին, այդ վէճի մասին տեղի ունեցող նոյնիսկ ներքին ընտանեկան խօսակցութիւնների մէջ ծնողներս այնպիսի վեհանձնութեամբ, այնպիսի անյիշաչարութեամբ էին խօսում իրենց հակառակորդների մասին, որ այդ յիշողութիւնը մտքիցս երբէք չի անհետացել, չնայելով, որ այն ժամանակ դեռ մանուկ էի»։

Ինչպէս երևում է Կանտի սրտին ամենից մօտիկ, ամենից թան-

կագին՝ իր մայրն է եղել։ Նորա մասին զովասանքով է խոսում, ասելով, որ սա բնութիւնից օժտուած էր խոհականութեամբ և խորը կրօնականութեամբ։ Գլխաւորապէս մայրն է եղել Կանտին կրթութիւն ստանալու հնարաւորութիւն տուողը։ Նա ջերմ յարգող էր և ունկնդիր քարոզիչ Շուլցին։ Այս պատուական անձնաւորութիւնը, որ իւր պիետիստական ջերմեռանդութիւնը միացրել էր գիտական փիլիսոփայական կրթութեան հետ, համալսարանի պրոֆեսոր էր և Ֆրիդրիխեան կոլեջի վերատեսուչ։ Անձամբ ծանօթ լինելով Կանտի ծնողներին, նա ուշադրութիւն դարձրեց առանձին ընդունակութեամբ օժտուած մանկան վերայ, որին մայրը ընտանեկան աղօթքի ժամերին բերում էր իւր հետ։ Շուլցը խորհուրդ տուեց ուսման տալ։ 1732 թ. ուրբաթամայ մանուկը դպրոց ընդունուեցաւ և յաճախում էր մինչև համալսարան մտնելը (1740 թ.)։ Այստեղից պիետիզմով համեմուած կրօնական կրթութեան հետ լատինական լեզուի լայն ծանօթութիւն տարաւ, այնպէս որ Կանտը մինչև խոր ծերութիւն վարժ խոսում ու գրում էր լատիներէն և լատինական դասական հեղինակներից բերած ցիտատներով յաճախ համեմում իւր գրուածքները։

1740 թ. աշնան Կանտը մտաւ Քեօնիգսբերգի համալսարանը։ Մայրը չտեսաւ այդ օրը, 1737 թ. նա արդէն վախճանուել էր։ Կանտն իւր պարապմունքները սկսեց ըստ ընդունուած սովորութեան փիլիսոփայական բաժնում, որը պահել էր միջնադարեան հոստատութիւնների հնաւանդ նշանակութիւնը. Սորա նպատակն էր լատինական լեզուի ու գրականութեան ծանօթութիւնն ընդլայնել, և նախապատրաստել ընդհանուր փիլիսոփայական գիտութիւններ անցնելով, բարձրագոյն բաժիններից մէկի մասնագիտութեան համար։ Մի քանի խօսք աւելորդ չէր լինի այդ համալսարանի մասին, քանի որ այդ համալսարանն եղաւ Կանտի ամբողջ ապագայ կեանքի շրջանակը։ Անոր արտաքին և ներքին ամենահամառօտ նկարագրութիւնն էլ կարող է ցոյց տալ, թէ ինչ աւելի քան համեստ վիճակի մէջ էր այն ժամանակուայ համալսարանը։ Բաւական է մի հայեացք ձգել Պրեգել գետի ափին կառուցած համալսարանի հին շէնքի վերայ, որ այժմեան համալսարանների մօտ մի խրճիթ է միայն։ Արտաքին այս համեմատութիւնը նշանակութիւն է ստանում այն պատճառով, որ միանգամայն համապատասխան է ներքին բովանդակութեան։ Մեր յիշած ժամանակում աւանդւում էին հետևեալ առարկաները. եբրայական լեզու, յունարէն, տրամաբանութիւն, բնազանցագիտութիւն, գործնական փիլիսոփայութիւն, բնագիտութիւն, պօէզիա, ճարտասանութիւն և պատմութիւն. իսկ թէ դեռ որքան հեռու էին այս բոլորն էլ համալսարանական պարապմունքի առարկայ լինելուց, կարելի է եզրակացնել 1735 թ. ուսումնական

ծրագրի հետևեալ տողերից. «Պաշտօնակարգ (ординарный) պրոֆեսորը իւր հրապարակական դասախօսութիւններն այնպէս պէտք է կարգաւորէ, որ իւրաքանչիւր կիսամեակի ընթացքում կարողանայ մի դիտութիւն անցնել. այսինքն տրամաբանութիւնը—մի կիսամեակում, բարոյական փիլիսոփայութիւն—մի կիսամեակում, մաթեմատիկայի պրոֆեսորը իւրաքանչիւր տարի պէտք է անցնէր թուաբանութիւն, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն և աստղաբաշխութիւն, որպէս զի ուսանողները և մանաւանդ նոցանից աղքատները հնարաւորութիւն ունենան գոնէ մէկ կամ մէկ ու կէս տարուայ ընթացքում բոլոր հիմնական փիլիսոփայական գիտութիւններն անցնելու։

Այսպէս, նայելով համալսարանի դասընթացքի բովանդակութեան և եղանակին, տեսնում ենք, որ աւելի շուտ դպրոցի հետ գործ ունինք քան թէ համալսարանի։

Կանտի համալսարանում ուսանելու շրջանից արժանահաւատ տեղեկութիւններ քիչ են հասել մեզ։ Պրոֆեսորներից ամենից աւելի նորան գրաւում էր Մարտին Կնուտցէն, որի դասախօսութիւններն ընդգրկում էին ամբողջ փիլիսոփայական առարկաներն, ամփոփելով իրենց մէջ նաև մաթեմատիկան և բնագիտութիւնը։ Կանտը նրա հետ անձնական յարաբերութիւններ էլ ունէր։ Նրա գրադարանից գրքեր էր վերցնում, նրան է պարտական բնագիտական, մաթեմատիկական և մանաւանդ Նիւտոնի վարդապետութեան մասին ունեցած ծանօթութիւններով։ Երկար ժամանակ նորա հետաքրքրութեան կենտրոնն են կազմում մաթեմատիկան, բնագիտութիւնն ու տիեզերաբանութիւնը։ Չպէտք է մոռանալ, որ այս գիտութիւններն այն ժամանակ փիլիսոփայութեան մասերն էին կազմում։ Կարող էր պատահել, որ դպրոցում տիրող նախկին պիետիստիկ-դոգմատիկ կրօնական ուղղութեան դէմ առաջացած հակազդեցութիւնն էր պատճառը, որ Կանտն առանձին հակումն էր զգում դէպի մաթեմատիկական գիտութիւնները. այդ երևում է նաև ուրիշ նշաններից։ Նմանապէս և չի կարող պատահական լինել այն հանգամանքը, որ լատինական հեղինակներից ամենից շատ Լուկրեցիասին էր սիրում։ Սակայն հաւաստի յայտնի է, որ նա աստուածաբանական դասախօսութիւններ էր լսում իւր հին հովանաւոր Շուլցից. թէ արդեօք նա պատրաստւում էր երբևիցէ հոգևոր կոչումն ընդունելու, այդ կասկածելի է, ինչպէս և կասկածելի է այն տեղեկութիւնը, թէ նա փորձել է քարոզել գիւղական եկեղեցիներում։ Ասում են, որ նա օգնում էր իւր ընկերներին պարապմունքների մէջ, այդ արդէն հաւանական է, քանի որ տնտեսական այդ սուղ վիճակի մէջ նորա կեանքն այդպիսով որոշ չափով կապահովուէր նիւթականապէս։ Թէ

որքան ժամանակ է լսել նա դասախոսութիւնները, որոշելը դժուար է. միայն ստոյգ է, որ 1746 թ. ամառնային կիսամեակում նա փիլիսոփայական բաժնին յանձնեց իւր «Gedancken von der wahren Schätzûng der lebendigen Kräfte — «Մտքեր կենդանական ուժերի իսկական գնահատութեան մասին» աշխատութիւնը, որ և հէնց այն ժամանակ տպագրուեցաւ։ Այս առաջին աշխատութիւնը Դեկարտի և Լայբնիցի կենդանի ոյժերի մասին ունեցած վէճերի մանրամասն քննադատութիւնն էր և թէպէտ հարցը առաջ չի տանում, սակայն մի վկայական է երիտասարդ հեղինակի փիլիսոփայական բնագիտական հարցերի խորազննին հետազօտութեան և մտածողութեան ընթացքի ինքնուրոյնութեան։ Կենդանի ինքնավստահութիւնը, դէպի՝ ոչխարի հօտի պէս մեծ անունների, հեղինակութիւնների յետևից գնացող մարդիկ տածած արհամարհանքը, դարձեալ ներկայացնում էին նորան իբրև մի մարդու, որ իւր մէջ ոյժ է զգում իւր ինքնուրոյն ճանապարհով ընթանալու։

Նոյն տարին 1746 թ. մարտի 24-ին մեռաւ Կանտի հայրը։ Տոհմական այն ժամանակագրութեան մէջ, որ մայրը գրում էր մինչև իւր կեանքի վերջը, Կանտը գրեց. «Թող Տէրը յաւիտենական խաղաղութիւն պարգևէ նրան, որին այնքան քիչ ուրախութիւն էր բաժին հանել այս աշխարհում»։ Եկեղեցական գրքում թաղման մասին եղած ծանօթութեան վրայ աւելացրած է երկու հակիրճ և պերճախօս բառեր. «Անձայն» (այսինքն առանց յուղարկաւորութեան), «Աղքատ»։ Նոյնը ասուել է նաև 9 տարի առաջ մօր թաղման մասին։

Աղքատութիւնը Կանտի երիտասարդութեան ուղեկիցն է եղել և հաւատարիմ էլ մնաց նորան ամբողջ տաս տարի։ Համալսարանում ուսանելու շրջանի յաջորդ տարիներն անցկացրեց նախ իբրև դաստիարակ, մի աստիճան, որից սովորաբար անցնում էին ազքատ մարդիկ։ Այդ մի քանի տարուայ դաստիարակութեան պաշտօնն է միմիայն, որ խախտում է նորա գործունէութեան ասպարիզի միօրինակութիւնը, նմանապէս և այդ պաշտօնն է, որ նորան դուրս են բերում Քեննիգսբերգ քաղաքի պարիսպներից, բայց ոչ երբէք հայրենի գաւառից, որի սահմաններից դուրս, ինչպէս երևումէ նա երբէք ոտք չկոխեց։ Այս ժամանակի մասին գրեթէ ոչինչ յայտնի չէ։

1755 թ. Կանտն իրաւունք ստացաւ Քեննիգսբերգի համալսարանում դասախօսելու։ Նոյն թուի ապրիլի 17-ին գիտնական աստիճան ստացաւ «De Igne» հեղինակութեան համար։ Սեպտեմբերի 24-ին պաշտպանեց դիսերտացիան՝ «Principiorüm primorum cogitationis metaphisicae nova dilucidatio»։ Ձմեռնային կիսամեակում սկսեց դասախօսութիւնները որպէս magister legens. այդ վիճակի մէջ նա 15 տարի մնաց։ Նորա երկու անգամ գործ դրած ջանքը թափուր

մնացած ամբիոնը գրաւելու՝ անհետևանք մնաց։ Երկրորդ անգամին նա դիմեց Եկատերինա Բ. կայսրուհուն, որովհետև Քեօնիգսբերգը 1757 թուից մինչև խաղաղութեան դաշն կապելը գտնուում էր Ռուս կառավարութեան ձեռքին։ Բանասաեղծութեան ամբիոնից, որ 1754 թ. ազատ էր մնացել և առաջարկուել Բերլինից, Կանտ ինքը հրաժարուեցաւ։ 1766 թ. իւր իսկ խնդրանօք արքունի կրտսեր գրադարանապետի պաշտօն ստացաւ 62 տալեր ռոճիկով։

Սակայն չպէտք է Կանտի այս շրջանի տարիները շատ էլ ծանր երևակայել. Պրիվատ դոցենտի դրութիւնն այն ժամանակ շատ աւելի ազատ ու նպաստաւոր հանգամանքների մէջ էր դրուած, քան այժմ է. որովհետև պրոֆեսորի պաշտօնը շատ աւելի պակաս պաշտօնական բնաւորութիւն ունէր։ Ճիշտ է նիւթականապէս աւելի պակաս էին ապահովուած, այն ժամանակ պրոֆեսորը աւելի չէր քան մի ուսուցիչ, որ լսարանական բաժնի կազմի մէջ էր մտնում և համալսարանի գումարից փոքրիկ ռոճիկ ստանում. սակայն մինչև անգամ պաշտօնակարգ (ординарный) պրոֆեսորը, բացի պարտաւորեալ դասախօսութիւններից, որոնց համար ռոճիկ էր ստանում, դասախօսում էր և իւր ցանկացած բոլոր առարկաներից։ Այսպիսի դասախօսութիւնների համար վարձատրութիւն ստանալը միանգամայն պրոֆեսորի մասնաւոր դործն էր, և կազմում էր սովորաբար նոցա արդիւնքի կարևոր մասը։ Այսպիսով ոչինչ չէր արգելում, որ յաջողութիւն ունեցած որ և է մի պրիվատ դոցենտ աւելի շատ ունկընդիրներ դրաւէր և ստանար աւելի շատ արդիւնք՝ քան զուտ պաշտօնակարգ պրոֆեսորը։ Կանտի այս կարդի դասախօսութիւնները շուտով մեծ հռչակ ընծայեցին նորան. և այդ հռչակն ունկնդիրների մեծ բազմութիւն էր ժողովում նորա շուրջը ոչ միայն բուն ուսանողներից այլ և բազմաթիւ հասարակական դիրք ունեցող անձնաւորութիւններից։

Որովհետև Կանտը գիտական-փիլիսոփայական գործունէութեամբ հանդերձ մեծ ծառայութիւն է մատուցել առանձնապէս թէ իւր հայրենիքին՝ Գերմանիային և թէ ընդհանրապէս մարդկութեան գործունէութեան մի այլ տեսակէտով, այն է ուսուցչութեամբ, ուստի աւելորդ չէր լինի այստեղ մի քիչ աւելի կանգ առնել նորա գործունէութեան այդ կողմի վրայ։

Քառասուն տարուց աւելի Կանտը որպէս համալսարանի դասախօս մեծ հաւատարմութեամբ ծառայեց իւր հայրենիքին։ Այդ գործունէութեամբ նա մեծ ազդեցութիւն է ունեցել երկրի առաջնորդող շրջանների աշխարհայեցողութեան վրայ։ Հին Պրուսիայի և անոր կից արևելեան նգաւառների գրեթէ բոլոր աստիճանաւոր պաշտօնեաներն ու հոգևորականները, ուսուցիչներն ու բժիշկները

նորա դպրոցին էին անցնում։ Գերմանիայի մի ծայրն ընկած փոքր համալսարանը նորա շնորհիւ գերմանական բարձրագոյն ուսումնական հիմնարկութիւնների շարքում առաջնակարգ դիրք գրաւեց։

Կանտի դասախօսութիւններն ընդգրկում էին իրենց մէջ ամբողջ փիլիսոփայութիւնը՝ այդ բառի հին իմաստով, որով հասկացւում էր տեսական բոլոր գիտութիւնների ամբողջութիւնը։ Այդ ամբողջութիւնից դուրս գտնւում էին միայն պատմաբանական գիտութիւնները. այդ մասին աւելի ճիշտ գաղափար կարող է տալ դասախօսուող առարկաների հետեւեալ ցուցակը.—տրամաբանութիւն, բնազանցագիտութիւն (метафизика), բարոյական փիլիսոփայութիւն, բնական իրաւունք, փիլիսոփայութեան հանրագիտութիւն, (энціклопедія) բնական աստուածաբանութիւն, մանկավարժութիւն, մարդաբանութիւն, ֆիզիքական աշխարհագրութիւն, տեսական բնագիտութիւն, մաթեմատիկայ, մեքենայագիտութիւն, հանքաբանութիւն։ Այս բոլորից նա դասախօսութիւններ արել է, իսկ մշտական դասախօսութեան առարկայ եղել են՝ տրամաբանութիւն, բնազանցագիտութիւն և բնական աշխարհագրութիւն ու մշտական զբաղմունքի նիւթ են մատակարարել մանկավարժութիւնն ու բարոյագիտութիւնը։

Դառնանք այժմ նրա դասախօսութիւնների նախ արտաքին—ապա ներքին եղանակներին։ Արտաքինն երկու եղանակ ունի. այն է—զուտ դասախօսութիւն և ապա գործնական վարժութիւն։ Պաշտօնակարգ պրոֆեսոր լինելուց յետոյ, նա պարտադիր դասախօսութիւններին միշտ կցում էր և այդ գործնական վարժութիւնները, որոնց մասին ճիշտ ոչինչ յայտնի չէ, սակայն ինչպէս երևում է, սոքա մի տեսակ գիտական վիճաբանութիւններ (диспутъ) են եղել։ 1758 թ. իւր դասախօսութիւնների մասին արած յայտարարութիւններից մէկով նա հաղորդում է, «որ նախընթաց օրերում չարադրուած դրութիւնները (Satz) վիճաբանական եղանակով կզննէ» և այդ եղանակը նա համարում է ամենանպատակայարմարը հաստատուն սկզբունքներ ստանալու համար։

Ինչ դասաւանդութեան ներքին եղանակին է վերաբերում՝ այդ ոչ թէ սխոլաստիկ-դոգմատիկ բնաւորութիւն է ունեցել, այլ սոկրատեան-քննադատական։ Առաջին ուղղութեան ամենաէական կողմն այն է, որ նա ընդունուած, որոշ տեսակետով նայուած ու հասկացուած, թէ գիտական և թէ փիլիսոփայական—բարոյական դրութիւններ նոյնութեամբ տալիս է ունկնդիրներին որպէս պատրաստի, վերջակետի հասած ճշմարտութիւններ և պարտադիր անում նոյնութեամբ էլ սովորելու։ Շատ պարզ է, որ նոյն բանը չէ աշակերտին ուղղակի սովորեցնել, թէ երբ որ և է տարածութիւն ուղիղ գծերով

շրջափակում է ամեն կողմից, այդ շրջափակող գծերի թիւը առնուազն երեք պիտի լինի, և նոյն բանը չէ, երբ աշակերտին ամեն կողմից շրջափակուած տարածութիւն են գծել տալիս և նա ինքն է այդ եզրակացութեան գալիս։ Առաջին դէպքում նորա միտքը չգործեց, այլ ուրիշ մտքի գործունէութեան հետևանքը որպէս մի բնառաւ իւր վրայ և հեշտութեամբ էլ կձգէ, կմոռանայ, իսկ երկրորդ դէպքում՝ ընդհակառակը՝ իւր իսկ ուղեղը ջանք է գործ դնում և հետևանքն այն է լինում, որ ուղեղի վրայ քանդակուում, տպաւորուում է անջինջ կերպով։ Կանտը ահա վերջնական հարուածը տուաւ սխոլաստիկ դոգմատիկ ուղղութեան իր ամբողջ ուսուցչական գործունէութեամբ։ Նորա դասախօսութիւնների նպատակը չէ պատրաստի փիլիսոփայական վարդապետութիւն տալը, այլ ունկնդրին ինքնուրոյն մտածութեան դրդել, նորանոր մտքեր որոնել տալ և զարգացնել։ Կանտը սկզբից և եթ տիրող դոգմատիկ ուղղութեան հակառակորդ լինելով՝ ասում է.— «փիլիսոփայութիւնն ընդհանրապէս չի կարելի սովորել այնպէս, ինչպէս սովորում ենք մաթեմատիկան, բնագիտութիւնը, պատմութիւնը, սակայն կարելի է սովորել փիլիսոփայութիւն անել։ Փիլիսոփայութիւն չի կարելի սովորել այն պատճառով, որ նա որպէս պատրաստի ճանաչուած գիտութիւն՝ գոյութիւն չունի. իւրաքանչիւր փիլիսոփայ իւր համակարգութիւնը, վարդապետութիւնը հիմնում է նախորդի բեկորների վերայ. բայց դեռ չի ստեղծուել մի համակարգութիւն, որ իւր ամբողջ մասերով մնար։ Փիլիսոփայութիւնը չի կարելի սովորել, որովհետև նա չկայ, բայց եթէ լիներ էլ, չէր կարելի սովորել. որովհետև «սովորովի» (заучное) փիլիսոփայութիւնը կդադարէր այլ ևս փիլիսոփայութիւն լինելուց և կդառնար մի պատմական՝ բայց ոչ երբէք փիլիսոփայական գիտութիւն»։

Այս խօսքերի մէջ «Լուսաւորութեան դարու»*) ոգին է նկատուում։ Աշակերտին անչափահաս դրութիւնից հանել և բարձրացնելով՝ սեփական հետազօտութիւնների վրայ հիմնուած ինքնուրոյն դատողու-

---

* «Լուսաւորութեան դար» (Zeitalter der Aufklärung) կոչուում է ԺԸ. դարը, շնորհիւ իւր առաջացրած մեծաւոր մեծ շարժման։ Այդ մեծաւոր շարժման հետ սերտ կապուած են Ֆրանսիացի նշանաւոր հեղինակ փիլիսոփայ Ժան-Ժակ Ռուսսոյի, գերմանացի բանաստեղծ Լեսսինգի եւ իւր՝ Կանտի անունները։ Կանտն աշխատել եւ առանձնապես որոշել է թե ինչ է նշանակում իւր դարու այդ «Լուսաւորութիւն» մակդիրը եւ եկել այն եզրակացութեան, որ այդ նոյն է թե ասել «ինքնուրոյն մտածողութեան դար»։ Մ. Բ.

թիւններ յօրինել տալը—համալսարանական դասաւանդման նպատակն է: Իսկ աշակերտին ինչպէս պէտք է սովորեցնել փիլիսոփայութիւն անել, այդ հարցին Կանտը պատասխանում է. «Վարժութիւնների և բանականութեան ինքնուրոյն գործունէութեան միջոցաւ։ Այդ վարժութիւններին նիւթ են տալիս մի կողմից բնական և պատմական իրողութիւնները (Thatsachen) և միւս կողմից այդ երևոյթների փիլիսոփայօրէն բացատրելու խնդիրը։ Կանտն իւր աշակերտներին երկու ճանապարհով է տանում և նա ամենից առաջ աշխատում է նոցա այդպիսի փաստեր մատակարարել կամ նոցա այդ փաստերին մօտեցնել։ Այդ է ֆիզիքական աշխարհագրութեան և մարդաբանութեան դերը, որոնց նա ահագին նշանակութիւն է տալիս։ «Նախկին փիլիսոփայական դասաւանդութեան սխալն այն էր, ասում է նա 1765 թ. իւր դասախօսութիւնների մասին արած մի յայտարարութեան մէջ, որ նա երիտասարդութեան շատ վաղ էր սովերեցնում իմաստակելու՝ նախ քան վերջնիս պատմական բաւականաչափ դիտելիքներ՝ ձեռք բերելը, նախ քան վարժութիւններով նորա միտքը զարդացնելը ծանօթացնում էին նորան ընդհանուր գաղափարների հետ. այստեղից էլ ծագում են նախ դպրոցական այնպիսի տեսական նախապաշարումներ, որ շատ անգամ աւելի բիրտ ու յամառ են լինում՝ քան առօրեայ մոլորութիւնները, ապա կանխահաս մտածողների չաղակրատութիւնը, որ աւելի կոյր է լինում քան անձնապաստանութեան մի ուրիշ տեսակ և աւելի անբուժելի՝ քան տգիտութիւնն է»։ Այդ չարիքի հետ կռուելու համար նա բնագանցագիտութիւնից առաջ փորձնական հոգեբանութեան ու մարդաբանութեան դասախօսութիւններ է անում. Նմանապէս աւաքինութեան մասին խօսելիս նա նախ չարադրում է այն, ինչ որ լինում է և ապա այն՝ ինչ որ պէտք է լինի։ Վերջապէս նորա ֆիզիքական աշխարհագրութեան դասախօսութիւններն առաջին մասում ունկնդիրներին երկրի ներկայ կազմութեան են ծանօթացնում, երկրորդ մասում—մարդուն իւր բնական նախնական վիճակին, երրորդ մասում—պետութիւնների և ազգերի կազմակերպութեան և այսպիսով ունկնդրին հաճելի և ուսանելի դիտելիքների պաշար են մատակարարում:

Կանտը իւր ունկնդիրներին ուրիշ ճանապարհով էլ էր առաջ տանում. այդ ճանապարհը փիլիսոփայութեան պատմութիւնն է։ Իւր դասախօսութիւնների ներածութեան մէջ նա սովորութիւն ունէր մի պատմական ակնարկ նուիրելու ինչպէս առանձին առանձին հարցերի, նոյնպէս և իւր նախորդների վարդապետութեան։ Մի պատմական ակնարկ էր ընծայում փիլիսոփայութեան, նաև հանրագիտութեան ու տրամաբանութեան մէջ։

Հերցին գրած մի նամակում Կանտն աւելի է շեշտում այն միտքը, թէ իր նպատակը չէ «արհեստաւոր փիլիսոփաներ» պատրաստել, «այլ հիմնական դրութիւնների վրայ հիմնուած համոզմունքներ տարածել ու ամրապնդել մարդկանց մէջ և այդպիսով զարգացող տաղանդներին միակ նպատակայարմար ուղղութիւնը տալ»։ Կանտն այդ սկզբունքով առաջնորդուեցաւ ամբողջ յիշեալ 40 տարուայ ուսուցչական գործունէութեան ընթացքում, և այդ սկզբունքը շատ արդիւնաւոր հանդիսացաւ նորա հայրենիքի համար. իսկ որ Գերմանիան այն ժամանակներից սկսած փիլիսոփայութեան նոր հայրենիք դարձաւ, դորա պատճառների մէջ երբէք չպէտք է մոռանալ Կանտին իւր ուսուցչական գործունէութեամբ։

Գիտական գործունէութեան սկզբում Կանտի փիլիսոփայական հետաքրքրութիւնն ըստ ամենայնի դէպի արտաքին աշխարհն էր ուղղուած, ինչպէս կարելի է եզրակացնել այդ նորա հեղինակութիւններից և դասախօսութիւններից։ Իւր դասախօսութիւնների մէջ բացի տրամաբանութիւնից և բնազանցագիտութիւնից, որ նորա ծրագրի կարևոր մասն էին կազմում, մտցրել էր մատեմատիկան ու բնագիտութիւնը։ Շուտով դոցա հետ հաւասար նշանակութիւն ստացաւ նաև ֆիզիքական աշխարհագրութիւնը, որ առաջին անգամ Կանտը մտցրեց համալսարանական դասաւանդութեան մէջ։ Այս աւարկան մեծ հետաքրքրութիւն առաջացրեց նոյն իսկ ուսանողական շրջանից դուրս։ Այս դասախօսութիւնների մէջ էր ամփոփում նա ամենահետաքրքրական և թանկագին տեղեկութիւնները բնութեան և մարդու մասին, այնպէս որ այդ տեղեկութիւնները, որպէս իւր տեսակի ուղևորութիւններ դէպի աշխարհի բոլոր կողմերը, կարող են մի տեսակ նախաբան համարուել այն ժամանակ սովորական դարձած կրթական ճանապարհորդութիւնների, կամ մինչև անգամ փոխարինել նոցա։

Բացի մի քանի բնական աշխարհագրական յօդուածներից, տիեզերաբանական պարապմունքների արդիւնք է և կարևոր նորա գրական գործունէութեան համար 1775 թ. լոյս տեսած շարադրութիւնը—«Ընդհանուր բնական պատմութիւն եւ երկնքի տեսութիւն կամ տիեզերքի կազմութեան եւ մեխանիական ծագման բացատրութիւն հիմնուած Նիւտոնի սկզբունքների հիման վերայ»։ Այս շարադրութիւնը նուիրուած էր Ֆրիդրիխ Բ. կայսեր և լոյս տեսաւ առանց հեղինակի անուան։ Մասամբ հրատարակչի սնանկացման պատճառով սկզբներում աննկատելի մնաց գրեթէ, և ուշ միայն արժանացաւ պատշաճաւոր ուշադրութեան։ Որ Կանտը ինքն իւր այս հեղինակութեան մեծ նշանակութիւն է տուել, երևում է այն հանգամանքից, որ նա երկու անգամ անոր բովանդակութեան գլխաւոր մասերը

քաղուածօրէն կրկնել է։ Այս հեղինակութեամբ Կանտը նպատակ է ունեցել ծագումաբանօրէն (genetisch) տիեզերքի և առանձնապէս մեր մոլորակային համակարգութեան կազմութիւնը բացատրել զուտ բնագիտական սկզբունքներով։ Կանտը սկսում է հէնց այն կէտից, որի վերայ կանգ էր առել Նիւտոնը՝ համակարգութեան կարգաւորութիւնը Աստծուն վերագրելով։ Կանտը ցոյց է տալիս, թէ ինչպէս են ծագում և չքանում յաւիտենական շրջանառութեան մէջ (kreislauf, круговоротъ) տիեզերական համակարգութիւնները չնորհիւ բնական ուժերի ներքին (imanente) գործունէութեան և Նիւտոնի հակառակ գալիս է այն եզրակացութեան, որ այս բոլորը բացատրելու համար անհրաժեշտ չէ Աստուծոյ մատը և ոչ էլ կարևոր։ Բոլորովին իրաւացի են առարկութիւններ այն բաւականին տարածուած կարծիքի դէմ, թէ Կանտի հայեացքները մօտ են Լապլասի աւելի ուշ ժամանակ տուած տեսութեան, որի համաձայն մոլորակները առաջ են գալիս՝ բաժանուելով կենտրոնական մարմնից, վերջինիս սղմուելու ժամանակ։ Կանտը յամենայն դէպս մօտ է մնում տիեզերքի ծագման վերաբերեալ հին տեսութիւններին (Լուկրեցիան նորան շատ ծանօթ մի հեղինակ էր), միայն այն տարբերութեամբ, որ Կանտը իւր հայեացքների հիմքում զետեղում է Նիւտոնի ձգողականութեան օրէնքը և արդի աստղաբաշխութիւնը։ Ընդհանրապէս գովասանքի արժանի է ոչ այնքան նորա հետազօտութեան ճշտութիւնը, որքան կենդանի, թափանցող, նոյն իսկ ֆանտաստիկ գուշակութիւնների հասնող երևակայութեան այն ուժը, որով նա հաւանապատում ենթադրութիւններ է անում, հիպոտեզներ տալիս տիեզերաբանական գործողութիւնների նկատմամբ։

Ուշադրութեան արժանի է նորա այդ հեղինակութեան նախաբանում արտայայտած կարծիքը բնական գիտութիւնների և կրօնի յարաբերութեան մասին։ Կրօնը ոչ մի կարիք չունի բնութեան երևոյթների մեքենայական բացատրման սահման դնելու, և հէնց այդ զուտ մեքենայական բացատրութեան հնարաւորութիւնն ապացոյց է բնութեան բոլոր տարրերի նպատակայարմարութեան։ Ընդհակառակը նա զգուշացնում է ամեն մի առանձին երևոյթ Աստուծոյ մասնակի նպատակներով բացատրելուց, որովհետև այդ միայն «ծուլամիտ փիլիսոփայութեան սիրած միջոցներից մէկնէ՝ բուն տգիտութիւնը բարեպաշտութեան դիմակի տակ ծածկելու համար»։ Այդ միջոցն ի վնաս հաւատի է ծառայում, որովհետև երևոյթի առաջիկայ բնական բացատրութիւնը նպաստում է բնագէտի յաղթանակելուն։

Այստեղ արդէն մի ակնարկ է ամփոփուած այն գաղափարի մասին, որ համակարգօրէն (систематически) զարգացել է քննադատական փիլիսոփայութեան մէջ, այն է բնագիտութիւնը և կրօ-

նական հաւասը միանգամայն անտարբեր են միմեանց նկատմամբ, ուստի և պէտք է կատարելապէս անջատուին միմեանցից։ Այդ երկուսի շփոթելը բնագիտա-աստուածաբանութեան (физикотеологія) մէջ հաւասարապէս կորստաբեր նշանակութիւն ունի, ինչպէս գիտութեան՝ այնպէս էլ հաւատոյ համար։ Թէ ինչ բարիք էր մատուցանում սորանով Կանտը ժամանակակիցներին, կարելի է հասկանալ կրօնի և գիտութեան միմեանց վերաբերմամբ բռնած թշնամական դիրքին աւելի մօտիկ ծանօթանալուց յետոյ։ Պատմական հին շրջաններից սկսած կրօնը ձգտում էր բնութեան ամենաանշան երեւոյթից սկսած մինչև տիեզերական ամենամեծ երեւոյթը՝ իւր սկզբունքներով բացատրելու։ Կրօնից քիչ յետոյ հանդէս եկաւ գիտութիւնը և որոշ յաջողութիւններ ունենալուց յետոյ, սկսեց ամեն ինչ իւր սկզբունքներով բացատրել և բացարձակ կերպով պահանջել կրօնի և հաւատոյ ոչնչացումը, մինչդեռ սիրտը չէր կարող հրաժարուել հաւատից, մանաւանդ որ պիետիզմը ըստ ամենայնի նպաստել էր գերմանական սրտերում կրօնի խորը արմատաւորման։ Կանտը հանեց նոցա այս անելանելի վիճակից իւր այն միանգամայն նոր փիլիսոփայական տեսութեամբ, թէ կայ զգայական աշխարհ, կայ նաև գերզգայական աշխարհ. մարդս օժտուած է այդ երկու աշխարհին էլ հասու լինելու կարողութեամբ, սակայն իւրաքանչիւրին իրեն յատուկ միջոցներով. չպէտք է շփոթել ոչ այդ երկու տարբեր աշխարհները, որոնցից մէկը մէւսին չի խանգարում, և ոչ էլ այդ աշխարհները ըմբռնելի կացուցանելու միջոցները։ Այսպիսով Կանտն ազատեցաց կրօնը գիտութեան միջից և գիտութիւնը կրօնի միջից։ Հաղարաւոր սրտեր լցուեցան ջերմ երախտագիտական զգացմունքով դէպի Կանտը՝ նորա մատուցած այս ծառայութեան համար։ Կանտի փիլիսոփայութիւնը նոցա այժմ հնարաւորութիւն էր տալիս թէ ջերմ հաւատացող լինելու և թէ կորովամիտ գիտնական։ Սակայն այս ուղղութիւնը մասամբ հակառակ հետեւանք էլ ունեցաւ։ Մինչև այդ ժամանակ տիրող երկու հակառակ կողմից էլ նա մեղադրուեցաւ ուրացութեան մէջ. մէկը նորան կրօնական սկզբունքների դաւաճան էր համարում, միւսը գիտութեան. իսկ որ առանձնապէս խիստ և նեղ հաւատացող մարդկանց այս վարդապետութիւնը երկիւղ էր պատճառում, այդ երեւում է Կանտի և իւր հին ուսուցիչ ու հովանաւոր Շուլցի մէջ տեղի ունեցած հետեւեալ դիպուածից. Շուլցը նախ քան թափուր մնացած ամրիոնի համար միջնորդելը, կանչեց նորան իւր մօտ և հետեւեալ խօսքերով դիմաւորեց. «Վախենում էք դուք Աստուծուց թէ ոչ» միայն Կանտի դրական պատասխանից յետոյ միջնորդեց նորա համար։

Վաթսունական թուականներից Կանտի մտածողութեան մէջ

նկատելի յեղաշրջում է տեղի ունենում, որ կարելի է և Սոկրատեան անուանել։

Ներքին աշխարհը — մարդաբանական-բարոյագիտական հարցերի շրջանը առաջնակարգ տեղ է գրաւում նորա մտածողութեան մէջ ի վնաս մաթեմատիկական-բնագիտականի և սխոլաստիկ բնազանցականի։ Այս շրջանում Կանտի իւր անձնական զարգացումը կախումն ունի դարու ընդհանուր յառաջադիմութիւնից։ Այդ այն ժամանակն էր, երբ գերմանական ազգի ոգին, երկարատև լեհարգիական քնից զարթնած, զարմանալի արագութեամբ վերածնւում էր մի նոր հարուստ կեանքի համար. այդ ժամանակ սկսեց իւր գործունէութիւնը Լեսինգը։ Որպէս հնացած գիտութիւն, սխոլաստիկ սաստուածարան և բնազանցագէտ դոգմատիկների վէճերը արհամարհանքի էին ենթարկւում։ Ազատուելով սխոլաստիկ մեկնաբանութիւնների դպրոցական պատեանից և օգտուելով գերմանական լեզուից, փիլիսոփայութիւնը ձգտում էր ընդհանուր ուսման վրայ ազդեցութիւն ձեռք բերելու։ Սկսում է ազգի հասարակական կեանքը կազմակերպուիլ. Ֆրիդրիխի և Յոսեփի դարում դէպի նոր գեղեցիկ գրականութիւնը տածած հետաքրքրութեան հետ՝ սկսում է նաև կրթուած դասակարգերի մէջ քաղաքական ինքնագիտակցութիւնը զարթնել։ Այս բոլորի վերայ աւելանում է և այն, որ արևմուտքից նորանոր հովեր են մուտք գործում. անգլիական փիլիսոփայութիւնն ու գրականութիւնը ազդեցութիւն են ձեռք բերում. ամենից աւելի կարդացւում է Շէֆտսբիւրի, ապա Իւմ և ամենից առաջ նորա «Փորձերը» որ մի գրուածք է հոգուն վերաբերեալ գիտութեան մասին։ Ֆրանսիացի հեղինակներից Վոլտերի հետ միասին առաջնակարգ նշանակութիւն են ստանում Մոնտեքիւ և Ռուսսօն։

Բոլոր այս ազդեցութիւններին անարգել կերպով ենթարկուեցաւ Կանտը, որ բարեբախտաբար երկարատև երիտասարդութիւն ու զարգացման ընդարձակ շրջան էր վայելում։ Ամենազօրեղ և անմիջական կերպով նորա զգացմունքների մէջ յուզումն առաջացրին Ռուսսոյի գրուածքները։ Մի յօդուածի մէջ (Fragmente aus dem Nachlass)։ Նա հետևեալ կերպով արտայայտեց այդ յեղաշրջումը, որ առաջացրել էր նորա մէջ Ռուսսօն. «Ես իմ անձնական հակումների շնորհիւ հետազօտող եմ։ Ես զգում եմ գիտութեան ծարաւ և բուռն ձգտում առաջ գնալու անոր սահմաններում։ Կար ժամանակ, երբ ես կարծում էի թէ իմ այդ գործունէութիւնը պատիւ է բերում մարդկութեան և արհամարհում էի խուժանը, որ ոչինչ չգիտէր այդ գործունէութեան մասին։ Ռուսսօն ինձ ուղիղ ճանապարհի բերեց։ Այդ կարծեցեալ առաւելութիւնը հորցրեց իւր արժէքն իմ աչքին։ Ես սովորեցի յարգել մարդկանց և աւելի անօգ-

տակար կհամարէի ինձ քան հասարակ մշակը, եթէ չհաւատայի, որ իմ այդ հետազօտութիւնները կարող են արժէք ընծայել բոլոր մնացեալներին և մարդկութեան իրաւունքները վերականգնել»։

Իմացութեան մի նոր գնահատութիւն, ճանաչողութիւն է այս, որով Կանտը պարտական է զգում Ռուսսոյին։ Գիտութիւնն ու մտահայեցողութիւնը (Speculation) անպայման արժանաւորութիւններ չեն, որովհետև դեռ ինքնըստինքեան նպատակ չեն անոնք, այլ միջոց մի բարձրագոյն նպատակի հասնելու համար։ Առանձին անհատի և ամբողջ մարդկութեան արժանիքները գնահատելիս Կանտը բարոյական կողմին միշտ առաւելութիւն է տալիս մտաւորից, (интеллектуальный) և այդ կազմում է ամբողջ նորա ապագայ աշխարհայեցողութեան հիմքը։ Այսպիսով նորա փիլիսոփայութիւնը նոր նշանակութիւն է ստանում, այսինքն նպատակ է դնում, մասնագիտութիւնները դէպի մարդկութեան՝ այդ վսեմ նպատակն ուղղելու, և մարդուն գիտական մեծամտութեան մէջ ընկնելուց պահելու։ Այստեղից արդէն բարոյական-մարդասիրական հարցասիրութիւնը (интересы), սկսում է նրա մէջ կենդրոնական տեղ բռնել, բնագանցագիտական և տիեզերաբանական աշխարհայեցողութեան հետ համեմատած։ Այդ ուղղութեամբ խորհելու հողի վրայ զարգացաւ քննադատական փիլիսոփայութիւնը։ Սորա նպատակն է վճռական կերպով վերջ տալ «մեսեռիկ» մտահայեցողութիւններին և բարձրացնելով բարոյականութիւնը, աշխարհայեցողութեան մէջ առաջնորդող դեր տալ անոր։ Այս յեղաշրջումը արտայայտուած է Կանտի վաթսունական թուականների գրուածքների մէջ։

Այստեղ աւելորդ չէր լինի տալ Կանտի մասին մի նկարագիր, որ նորա գործունէութեան և ուժերի կատարեալ զարգացման այս շրջանին է պատկանում և որ տալիս է Կանտի երկրպագուների թուին պատկանող Հերդերը։ «Ես հրճւում էի փիլիսոփայի հետ ծանօթ լինելու բախտով, որ իմ ուսուցիչն էր։ Իւր կեանքի ծալկեալ շրջանում նա ոչքի էր ընկնում երիտասարդական մի զուարթ աշխուժութեամբ, որ լիայոյս եմ անբաժան կլինէր նրանից նաև ծերութեան օրերում։ Նորա բաց, կարծես մտածողութեան համար ստեղծուած ճակատը փայլում էր մի անջինջ պայծառութեամբ և զուարթութեամբ. մտքերով հարուստ վերին աստիճանի հետաքրքրական միտքը հոսում էր. նորա շրթունքներից, կատակներն ու սրախօսութիւնները հոգեկան լաւ տրամադրութիւնը երբէք չէին բացակայում։ Նոյն ուշիմութեամբ, որով նա ուսումնասիրում էր Լայբնից, Բաումգարտէն, Կրուզիուս, Իւմ և քննադատում Նիւտոնին, Կեպլերի և բնագէտների բնութեան վերաբերեալ օրէնքները, նոյն ուշիմութեամբ վերաբերւում էր նա այն ժամանակ ասպարէզ

իջած Ռուսսոյին, նորա «Էմիլին» և «Էլոիզին՝ և նմանապէս բնական գիտութիւնների շրջանում կատարուած գիւտերին։ Ազգերի պատմութիւնը, բնագիտութիւնը, մաթեմատիկան և փորձը այն աղբիւրներն էին, որոնցով նա կենդանութիւն էր տալիս իւր խօսքին։ Ոչ մի գիտենալու արժանի բանի նա անտարբեր չէր վերաբերւում։ Ոչ մի ժամանակ ոչ մի կանխակալ միտք, կուսակցական հաշիւ, նախապաշարմունք, փառասիրութիւն չէին խանգարում նրան ընդլայնելու և լուսաբանելու ճշմարտութիւնը։ Նա խրախուսում և դրդում էր ինքնուրոյն մտածութեան, բռնանալ ասած բանը միանգամայն խորթ էր նրա հոգուն։ Այդ մարդը, որին ես յիշում եմ երախտագիտական զգացմունքով և խորը յարգանքով, վերջացնում է Հերդերը, Էմմանուէլ Կանտն էր. առանձին բաւականութեամբ եմ վերակենդանացնում յիշողութեանս մէջ նորա պատկերը»։

1770 թ. Կանտը ստացաւ տրամաբանութեան և բնագանցագիտութեան ազատ մնացած ամբիոնը, իսկ դրանից քիչ առաջ նա հրաւէր էր ստացել Ենայից և Էրլանգենից։ Բացի դրանից վաղուց արդէն նա վայելում էր կառավարութեան յարգանքը. այդ առանձնապէս հրևում է 1767 թ. հրովարտակից, որի մէջ գովասանքով է յիշւում նա, մինչդեռ դրանից մի տարի առաջ վատ նկատողութիւն էր արուած պրոֆեսորներին։ Կառավարութեան ասելով՝ նոքա շատ քիչ են աշխատում բարեխիղճ լինելու իրենց պարտականութիւնների նկատմամբ։

Առանձին յարգանք էր վայելում Կանտը ժողովրդական լուսաւորութեան նախկին մինիստր Ցեդլիցից։ Այս պատուական մարդը, որ իւր կոչումը ի կատար ածելու հազուադիւտ ընդունակութիւն ունէր, չնորհիւ ստացած նուրբ ու հիմնաւոր կրթութեան և դէպի մարդկային հոգեկան վիճակները տածած յարգանքին, ոչ մի առիթ չէր փախցնում Քեօնիգսբերգի փիլիսոփային իւր յարգանքն արտայայտելու։ 1778 թ. երբ Հալլէում Պրուսիայի ժամանակի ամենանշանաւոր համալսարանում պրոֆեսորի տեղ բացուեց, մի քանի անգամ կրկնելով իւր հրաւէրը, աշխատում էր համոզել Կանտին, որ բաւականին պատկառելի մի ռոճիկով (800 տալ.) և ատիճանով ընդունէ այդ պաշտօնը. սակայն ոչ հրաւէրի այդ գրաւիչ կողմերը՝ ոչ էլ նախարարի նրա վրայ դրած պարտականութիւնը—չհրաժարուել գործունէութեան այդ աւելի լայն ասպարիզից՝ չկարողացան Կանտին անջատել իւր հայրենիքից, իրեն շրջապատող սովորական պարագաներից։» Ամեն մի փոփոխութիւն, գրում է նա Հերցին. թէկուզ իմ ապագայի բարեկամն նկատմամբ հմտամեծ յոյսեր ներշնչող, այսուամենայնիւ իմ մէջ երկիւղ է յարուցանում։ Համոզուած եմ, որ բնութեան այդ բնաջրի վրայ պէտք է աշխատել։

դարձնել՝ եթէ կամենում եմ երկարացնել այն թելը, որ ինձ համար հիւսել են ճակատագրի դիցուհիները [1]։ Նա զգում էր, որ իւր առաջ նոր փիլիսոփայութիւն յօրինելու մեծ խնդիրը կայ, որի ուրուագիծը պաշտօն ստանձնելիս, 1760 թ.-ի գիտական վիճաբանութեան մէջ արդէն տուել էր։

1781 թ. վերջապէս լոյս տեսաւ «Զուտ բանականութեան քննութիւն» նշանաւոր գրուածքը, որ Կանտի ամբողջ փիլիսոփայութեան կենդրոնն էր կազմում. անհրաժեշտ է անոր մի քիչ մօտից ծանօթանալ։

Գերմանիայի երկու փիլիսոփաներ Կունօ Ֆիշեր և նորանից յետոյ Ֆայհինգեր իրաւամբ նկատում են, որ առհասարակ Կանտը առանձին հակումն է զգում փիլիսոփայական վէճերի ժամանակ միջամտել, որպէս հաշտարար դատաւոր։ Մենք տեսանք նորան այդ դերը ստանձնած «Ընդհանուր բնական պատմութիւն և երկնքի տեսութիւն...» գրուածքի յառաջաբանում, և թէ ինչպէս յաջող տարաւ այդ դերը կրօնի և գիտութեան մէջ առաջացած թշնամութիւնը լուծելով իւր փիլիսոփայական նոր աշխարհայեցողութեան մէջ։ Նոյն այդ նպատակով է հանդէս գալիս այստեղ նա իւր քննական փիլիսոփայութեամբ. մնում է մեզ այժմ տեսնել թէ այս դէպքում, նա ինչպէս է տանում գործը։ Կռիւը այժմ բացիոնալիզմի և էմպերիզմի մէջն էր. ինչ յարաբերութեան մէջ այնտեղ կրօնն ու գիտութիւնն էին, նոյն յարաբերութեան մէջ են այստեղ բանականութիւնն ու փորձը, մէկը միւսի բացակայութիւն էր պահանջում։ Սակայն Կանտը իւր քննադատական փիլիսոփայութեամբ, կամ ընդհանուր բառով կրիտիցիզմով, ցոյց տուեց երկու մեթոդների նպատակայարմարութիւնն էլ՝միայն եթէ իւրաքանչիւրը կգործէր իւր սահմանում։

Մենդելսոնին գրած նամակում Կանտը ասում է, որ իւր այս աշխատութիւնը առնուազը 12 տարուայ մտածողութեան արդիւնք է, բայց գրել է 4—5 ամսում, թռուցիկ կերպով, մեծ ուշադրութիւն դարձնելով բովանդակութեան վրայ, բայց ոչ երբէք արտաքինի ու ընթերցողին մատչելի անելու վրայ։ Ոչ մի գրուածքի մէջ ընթերցողն այնպիսի անուշադրութեան չի մատնուած, ինչպէս «Զուտ բանականութեան քննութեան» մէջ. այդ է պատճառը, որ այնքան դժուար հասկանալի է, և շատերը սկսելով, կիսում յուսահատուել թողել են։

Կանտի կեանքի շարունակութեան պատմութիւնը նոյնանում է

---

1 Թանգր. Ցունաց դիցաբանութեան մէջ երեք դիցուհիներ կային.—Կլոտոն մանում էր կեանքի թելը, Լաքեզիսը, որոշում էր այդ թելի երկարութիւնը, իսկ Ատրոպին կտրում։ Թանգր. փխդրդի.

նորա գրուածքների ծագման և անոնց ժամանակակիցների վրայ գործած ազդեցութեան պատմութեան հետ։ Ութսունական թուականները Կանտի գրական ամենաբուռն գործունէութեան շրջանն են կազմում։ Իննսունական թուականներին նորա ուժերը սպառուեն, սակայն նորա հռչակն ու ազդեցութիւնը սկսում են արագ տարածուել։ Բոլոր գերմանական, ոչ միայն բողոքական, այլ և կաթոլիկ համալսարաններում ուսումնասիրուում է քննադատական փիլիսոփայութիւնը, որ և տիրող է հանդիսանում այնուհետև իւր մէջ ձուլելով՝ ինչպէս տեսանք, նախկին երկու հակառակ ուղղութիւնները։ Այս նոր ուղղութեան յարդողները գերմանական բոլոր մասերից ճանապարհորդում են հեռաւոր արևելք (Քէօնիգսբերգ)՝ նոր վարդապետութեան հիմնադրին ողջունելու։ Այդ այցելուներից էր Ֆ. Դ. Ֆիխտէն։ Դանիացի Բագեզէնը Կանտին երկրորդ մեսիա է անուանում։ Ութսունական թուականներին Կանտը արդէն Քէօնիգսբերգի համալսարանում առաջին տեղն է բռնում և նա չնորհեց առաջին անգամ այդ համալսարանին եւրոպական անունը։

Այժմ դառնանք Կանտի կեանքի արտաքին կողմին։ Նորա սովորութիւնները ու կեանքի եղանակը խիստ պարզ էին և միանգամայն հիմնուած մարմնի ու հոգու առողջապահական կանոնների վրայ. թոյլ կազմուածքը, վաղ երիտասարդութիւնից սկսած, ստիպեց նորան խիստ պահեցողութեամբ (Diätetik) առաջնորդուիլ։ Նա կարճահասակ էր և այնպիսի նեղ կրծքով, որ նորա թոքերի վրայ ուղղակի ճնշում էր գործ դնում։ Ինչպէս լաւ մանկավարժ, հոգածութեան և զգուշութեան միջոցով նա այնպէս տարաւ իւր առողջութիւնը, որ մարմնական կեանքը մինչև ամենապատկառելի հասակն անգամ՝ արգելք չը հանդիսացաւ հոգևոր կեանքին։ Նա սկզբունքով, կամ դէպի իգական սեռը տածած ատելութիւնից չէր, որ չամուսնացաւ. ընդհակառակը նա յարգանքով էր խօսում (մանաւանդ «Դիտողութիւններ գեղեցկի և վսեմի զգացմունքների վերաբերեալ» հեղինակութեան մէջ «տանտիկնոջ» (Frauenzimmer) մասին և նկարագրում է նորա բնաւորութեան գրաւիչ կողմերը ֆրանսիական վայելչադիտութեամբ (галантность), ինչպէս պահանջում էր ժամանակի ոգին։ Ասում են, որ երկու անգամ պատրաստուել է առաջարկութիւն անելու, բայց չափազանց երկար տատանուելով, պատեհ ժամը վախցրել է. սակայն սորա պատճառն էլ այն կարող է լինել, որ նա չէր կամենում, արդէն հասակն առած՝ ընտանեկան կեանքի պարտականութիւններով ծանրաբեռնուիլ։ Նա չէր պատկանում այնուամենայնիւ այնպիսի տրտնջող միանձնականներին, ինչպէս որ օր. Շոպենհաուէրն էր։ Նա սիրում էր հասարակութիւնը և յայտնի էր իւր հեզահամբոյր վարուեցողութեամբ։ Նոյնչափ ազատ էր զգում նա իրեն և բարձր հասարակու-

թեան մէջ։ Իւր ծանօթների շրջանը միմիայն համալսարանի մարդկանցից չէր կազմում, այլ սիրում էր ծանօթանալ նաև զուտ աշխարհիկ մարդկանց հետ այն է՝ աստիճանաւորների, վաճառականների, գրավաճառների հետ և այլն։ Ուրթուսնական թուականներին նա մի տուն գնեց և իւր համար որոշ ընտանեկան նիստ ու կաց ստեղծեց ապրելով մի ծառայի և մի խոհարարուհու հետ։ Ճաշին սիրում էր հիւրեր ունենալ սովորաբար մէկ կամ երկու հոգի, կամ ամենաշատը 5 հոգի և հրաւիրում էր իւր երիտասարդ բարեկամներից կամ աշակերտներից։ Օրուայ ժամերը խիստ որոշ կարգերի էին բաժանուած. առաւօտեան ժամը 5-ին նա զարթնում էր, մինչև դասախօսութիւնները՝ 7-8 աշխատում էր և 9-10-ից մինչև կէսօր դարձեալ պարապում էր։ Ճաշի ժամանակը, որ վերջին տարիները նորա կերակուր ընդունելու միակ ժամանակն էր, սիրում էր հաճելի զրուցով երկու երեք ժամ ձգձգել, ապա մի ժամ զբօսնում էր, իսկ օրուայ մնացած մասը նուիրում էր ընթերցանութեան և խորհրդածութիւնների և ժամը 10-ին պառկում էր քնելու։ Այդպէս անցնում էր օրը օրի յետևից։ Միօրինակ այդ կանոնաւորութեան մէջ գրեթէ ոչ մի ընդհատում չէր պատահում։ Լուսաւորութեան այդ դարում, երբ ամենքը աւելի դէպի աշխատանք էին հակուած, քան դէպի տօնականութիւն, արձակուրդները շատ կարճատև էին։ Ճանապարհորդութիւններ չէր անում և իւր կեանքի վերջին տասնամեակներում իւր հայրենի քաղաքի մօտակայ շրջակայքից դուրս չեկաւ։ Նրա աշխարհի մասին ունեցած անմիջական ծանօթութեան շրջանը շատ սահմանափակ էր։ Ֆիզիկական աշխարհագրութեան առաջին պրոֆեսորը իւր աչքով երբէք լեռնոտ երկիրներ չէր տեսել և կասկածելի է, արդեօք տեսել էր նա ծովը, որ Քեոնիգսբերգից միայն մի քանի ժամուայ հեռաւորութեան վրայ էր գտնուում։

Նորա այս անմիջական ծանօթութիւնների պակասը պէտք է լրացնէր ընթերցանութիւնը։ Նորա համար, որպէս այն ժամանակի իսկական գիտնականի համար, աշխարհը գրքերն էին. սակայն նոցա ոչ թէ վերացական, այլ կոնկրէտ բովանդակութիւնն էր սիրում Կանտը։ Առանձնապէս գնահատում էր ճանապարհորդական նկարագրութիւններ և բնագիտական բովանդակութիւն ունեցող գրուածքները։ Նրա աշակերտ ու բարեկամ Կրաուզը պատմում է, որ Կանտը սիրում էր նաև գրական պարապմունքների ժամանակ մի նոր գիրք դնել կողքին և ժամանակ առ ժամանակ նայել։ Գեղեցիկ գրականութիւնից ախորժակով կարդում էր գլխաւորապէս սրամիտ երգիծաբանական գրուածքներ։ Այսպէս օրինակ Գուարիեաս, Սերվանտես, Սվիֆտ, Լիխտենբերգ և Մոնտեն պատկանում էին նորա սիրելի հեղինակների թուին։ Նա սաստիկ հակակրանք էր զգում

դէպի սանտիմենտալիզմը, հետեւապէս և դէպի բոլոր զգացկոտ վէպերը, արտասուահեղ ողբերգութիւնները և այլն

Նրա դէպի պետական ու քաղաքական կեանքն ունեցած վերաբերմունքն ընդհանրապէս ժամանակի հանգամանքներով է որոշւում. քաղաքական կարգերին և դէպքերին վերաբերւում էր սառն ու անտարբեր։ Լինելով մեծ փիլիսոփայ և կոսմոպոլիտ, իրրև հպատակ պետութեան պատկանելու, կամ պետութեան հետ ունեցած ներքին առնչութեան առանձին ջերմ զգացմունք ցոյց չէր տալիս. ըստ որում այս պետութիւնն էլ, միայն հպատակ էր ճանաչում և ոչ քաղաքացի, ոչ սպասում էր աւելի ջերմ վերաբերմունքի, ոչ էլ պահանջում։ Պրուսական դահի վրայ բազմած լուսաւորութեան մեծ ներկայացուցչին (Ֆրիդրիխ Մեծ) ջերմ երախտագիտութեամբ էր վերաբերւում, որովհետև սա մտածողութիւնը ազատ էր թողնում արտաքին կաշկանդումներից։ Գնահատում էր նրան նաև այն բանի համար, որ կառավարութեան մէջ օրինազահութեան սկզբունքն էր մտցրել և ամեն կերպ պաշտպան էր հանդիսանում իրաւունքի։ Սակայն մնացած կետերում հաւանօրէն Կանտը չէր պատկանում անպայման յարգողների թուին։ Իր զզուանքը դէպի պատերազմ, դէպի «ամբիցիութեան այդ խարազանը», «ամեն մի բարիք խորտակողը», մանաւանդ դէպի այն պատերազմը, որ մղւում է զուտ տոհմական (династическій) շահերից դրդուած, այնպէս յաճախ և բացարձակ կերպով է արտայայտում, որ անկարելի է ընդունել, որ նա դրանով չէր դատապարտում նաև Ֆրիդրիխ Մեծի պատերազմները։ Կանտի մէջ հետքն անգամ չկայ այն բուռն ոգևորութեան, որ առաջացնում էին երիտասարդ Գէօթէի մէջ թշնամացած աշխարհի դէմ պայքարող թագաւորի սխրագործութիւնները։ Ճիշտ է, Ֆրանկֆուրտի բնակչից (Գէօթէից) պատերազմը այնքան հեռու էր, որ կարող էր նրա երևակայութիւնը գրգռել միայն, սակայն Պրուսիայում չափազանց կտրուկ կերպով դառն իրականութիւնն էր զգացւում։ Ֆրիդրիխի կառավարութեան ուսումնարանների և համալսարանների նկատմամբ ցոյց տուած ժլատութիւնը նմանապէս բոլոր ուժերը պատերազմի համար լարելու արդիւնք էր։ Կանտը միանգամ չէ վշտացած մատնացոյց անում այն հանգամանքի վրայ, որ պետութիւնը միայն պատերազմների համար միջոցներ ունի։ Դորա հետ մեր բուրժուա փիլիսոփայի հոգու մէջ խորը արմատացել էր զզուանքը դէպի ամբողջ պալատական կեանքը և պէտք է ենթադրել, որ այս ատելութիւնը աւելի զօրացաւ նորա մէջ թագաւորի պալատական ֆրանսիացի փիլիսոփաների հակազդեցութեան ներքոյ։ Կասկած չկայ և այն բանի մէջ, որ Կանտի քաղաքական համակրութիւնը ոչ թէ տոհմական միապետական եղանակի կողմն էր, այլ

աւելի այն ժողովրդական պետութեան, որի նմանը հէնց նոր Հիւսիսային Ամերիկայում էր երևան եկել և ըստ երևոյթին պէտք է հաստատուէր նաև Ֆրանսիայում յեղափոխութեան սկզբին։ Իւր ժամանակի այս երկու քաղաքական շարժումներին Կանտը ջերմ հետաքրքրութիւն էր ցոյց տալիս։ Դեռ 1798 թ. երբ գերմանիայում դէպի Ֆրանսիական յեղափոխութիւնն ունեցած արտակարգ ոգևորութիւնը բաւականին սպառուել էր, Կանտը խօսում է որպէս մեծամեծ յոյսեր խոստացող պատմական յեղաշրջական մի կետի մասին, չնայելով որ վճռական կերպով դատապարտել էր ֆրանսիացիներին իւրանց թագաւորին գլխատելու համար։ Նա գտնում է, որ պետութիւնների հասարակապետացումը պէտք է ամէն յաւիտենական խաղաղութեան սերմը։

Կանտի վերաբերմունքը դէպի եկեղեցին նմանապէս պէտք է ասել, որ անձնական չէր, այլ աւելի դատողութեան վրայ էր հիմնուած։ Նա հասկանում էր եկեղեցւոյ պատմական նշանակութիւնը և անոր աշակցութիւնը ժողովրդի կարգապահման և բարոյականացման գործում. սակայն ինքը անձամբ եկեղեցու կարիք չէր զգում և աստուածպաշտութեան չէր մասնակցում։ Բայց այս մի ռէակցիա էր բարեպաշտական վարժութիւնների չափազանցութեան դէմ, որի մէջ անց էին կացրել նորա մանկութիւնը. ամեն մի «երազողական» (мечтательный) բարեպաշտութիւն նորան սաստիկ ընդդէմ էր։ Դէպի իսկական քրիստոնէութիւնը նոյն ջերմ յարգանքի զգացումն էր տածում, ինչ որ և դէպի նորա հիմնադիրը, նորա մէջ տեսնելով բարոյականութեան կատարելատիպը։ Դէպի Ս. գիրքը, որին վաղ մանկութիւնից լաւ ծանօթ էր, նմանապէս ակնածութեամբ է վերաբերուել միշտ։ «Սուրբ գիրքը, որպէս ժողովրդի գիրք, ամենամեծ բարիքն է, որ երբ և իցէ մարդկութիւնը ստացել է։ Եթէ գոյութիւն ունին հրաշքներ, ապա այս գիրքը հէնց ամենամեծ հրաշքն է, որի մէջ հրաշագործ պատմութիւնները ծառայում են լոկ պատմական հաստատութիւն չնորհելու այն բաներին, որ կրօնը պահանջում է բանականութեան միջոցով. իսկապէս կրօնական վարդապետութեան այս համակարգութիւնը, որ կազմուել է անգէտներից՝ առանց յունական իմաստասիրութեան, շատ աւելի բարոյական ազդեցութիւն է ունեցել մարդկային սրտերի վրայ, քան ուրիշ որև է համակարգութիւն»։

Ինքնուսական թուականները նորա համար բերին իրենց հետ առաջին և միակ կոնֆլիկտը (ընդհարում), որ արտաքուստ, ճիշտ է, արագ վախճան ստացաւ, սակայն ներքուստ խորը յուզեց Կանտին։ Ֆրիդրիխի յաջորդը 1788 թ. Ցեդլիցի տեղ նշանակեց նախկին քարոզիչ կղերական և կղերամիտ Վէյլներին։ Հէնց այդ ժամանակուանից

Պրուսիայում լուսաւորութեան դէմ սիստեմատիկ հալածանք է բացւում։ Գրաքննութեան և հաւատաքննութեան միջոցով հրաժարեցնելով և տուգանքի ենթարկելով, կղերաբար տրամադրուած Ֆրիդրիխ Վիլհելմ II ի կառավարութիւնը սկսեց արմատախիլ անել նախորդի կառավարութեան ոգին։ Այնպէս էր թւում, թէ պէտք է հատուցուի այն բոլոր անարդանքների համար, որ հասել էին կղերականներին և բարեպաշտոն մարդկանց դահի վրայ բազմած ծաղրածուից։ 1)

Կանտը, որի փիլիսոփայութիւնը չէր կարող այս կառավարութեան հաճելի լինել, մանաւանդ որ նա չէր թաղցնում իւր վերաբերմունքը դէպի ժամանակի ամբողջ քաղաքական աշխարհը յուզող դէպքերը, ընդհարուեցաւ այս կառավարութեան հետ չնորհիւ իւր «Կրօնը զուտ բանականութեան սահմանում» գրուածքի։ Կանտը ցանկանում էր տպագրել այդ Բիստերի Berliner Monatschrift-ի մէջ մաս մաս, բայց հէնց երկրորդ մասն արդէն արգելուեցաւ գրաքննիչից։ Այն ժամանակ նա իւր գրուածքը յանձնեց Ենայի փիլիսոփայական ֆակուլտետի քննութեան և տպագրեց առանձին գրքով։ Մի տարի յետոյ 1791 թ. Հոկտեմբերի 1-ին ստացաւ կայսերական հրովարտակ հետևեալ բովանդակութեամբ. «Մեր բարձր անձնաւորութիւնը մեծ տհաճութեամբ նկատում է, որ դուք ձեր փիլիսոփայութիւնը դործադրում էք ս. Գրքի և քրիստոնէութեան մի քանի գլխաւոր և հիմնական վարդապետութիւններն աղաւաղելու և սուրացնելու համար։ Մենք ձեզնից անյապաղ բարեխիղճ հաշիւ ենք պահանջում և յուսով ենք, որ այլ ևս այդպիսի պանցառութիւններ չէք դործի։ Ձեր պարտականութեան աւելի շուտ համապատասխանում է դործադրել ձեր ազդեցութիւնն ու քանքարները յօգուտ Մեր՝ այս Երկրի նկատմամբ ունեցած հայրական դիտաւորութիւնների իրադործման։ Հակառակ դէպքում, այսինքն երբ դուք շարունակէք յամառել, դորա անմիջական հետևանքները ձեզ համար աննպաստ կարդադրութիւններ կլինին»։

Կանտը այդ բանին պատասխանեց մի դիկուցագրով, որի մէջ ամենից առաջ պաշտպանւում է իր վրայ բարդած մեղադրանքներից և վճռական կերպով պնդում գիտնականի (տարբերելով «ժողովրդական ուսուցչից») կրօնական հարցերի շրջանում ինքնուրոյն կարծիքներ յօրինելու և արտայայտելու իրաւունքի վրայ։ Սակայն եզրակացութեան մէջ նա հրաժարւում է ապագայում այդ իրաւունքից օգտուելուց։ Որպէս զի ամենափոքրիկ կասկածից անդամ խոյս տայ, ամենատարահով միջոց այս է համարում նա. «որպէս

1) Ֆրիդրիխ Մեծ.

Նորին Մեծութեան հաւատարիմ հպատակ՝ հանդիսաւոր կերպով յայտնել, որ այսուհետև ես կզգուշանամ միանգամայն կրօնի վերաբերեալ կարծիքներս հրապարակօրէն արտայայտելուց թէ դասախօսութիւնների և թէ հեղինակութիւնների մէջ»։

Մի թերթիկի վրայ, որ մնացել է նորա մահուանից յետոյ թղթերի մէջ, այդ հարցի վերաբերեալ հետևեալ խորհրդածութիւնն է գտնուած. «Հրաժարուել իւր ներքին համոզումից՝ սոսոր վարմունք է. բայց այսպիսի դէպքերում լռել՝ այդ արդէն հպատակի պարտականութիւնն է։ Այն բոլորը, ինչ մենք ասում ենք, պէտք է ճշմարտութիւն լինի. բայց դորանից չի հետևում, թէ ամէն ճշմարտութիւն պարտաւոր ենք ասել հրապարակով»։

Չի կարելի չխոստովանուել, որ լռելու պարտականութիւնը այսպէս հանդիսաւոր կերպով իւր վրայ առնելու մէջ աւելի զգուշութիւն է երևում՝ քան անվեհերութիւն։ Վերջ ի վերջոյ եօթանասնամեայ ծերունին կարող էր հանգիստ որտով սպասել այն բոլոր «աննպաստ կարգադրութիւններին», որ իրեն սպառնում էին, որովհետև Բերլինում հաղիւ թէ նորա գրուածքներն արգելելուց և ռոճկի յաւելումներից զրկելուց այն կողմ անցնէին։ Սակայն Կանտը մարտիրոս չէր. բացի այդ նա կարող էր մխիթարուել, որիւր ասելիքը ասել է, այդ պատճառով էլ նա իւր բնաւորութեան համապատասխան մի ելք ընդունեց—լռութիւն և խաղաղութիւն։ Ճշմարիտ է այն, որ եթէ նա եօթանասնամեայ Սոկրատի պէս համարձակ յայտնէր, որ աշխարհի մէջ աւելի բարձր կոչում ունի, քան Պրուսիոյ թագաւորի տուած պրոֆեսուրան է, և որ նա չի կարող դադարեցնել իւր ճշմարտութիւնը ուսուցանելու, մոլորութեան և կեղծիքի դէմ մաքառելու իւր կոչման, այն ժամանակ նորա կեանքի և գերմանական փիլիսոփայութեան ամէն մէկ էջը աւելի վեհ կլինէր, քան այժմ է։

Սակայն քննադատելով այդ դէպքը, չպէտք է աչքաթող անել այն հանգամանքը, որ Կանտը վաղուց արդէն անց էր կացրել իւր կեանքի և գործունէութեան ծաղկափթիթ շրջանը։ Դեռ 1789 թ. իւր նամակներում յաճախ դանգատւում է ուժերի սպառումից։ Նա արդէն նախ քան կայսերական հրովարտակ ստանալը, ինկատի առնելով իւր հասակը, հրաժարւում էր մաքառելուց. 1793 թ. երբ գրավաճառ Շպենները առաջարկեց նրան իւր նախկին մի յօդուածը (Idee zû einer allgemeinen Geschicte in Weltbürgerlicher Absicht) ժամանակակից հանգամանքների համապատասխան յաւելումներով հրատարակել, նա պատասխանեց մերժումով, առարկելով իւր եօթանասնամեայ հասակը։ «Կեանքի այս պահուն, ասում է նա, ծերունուն պէտք է խորհուրդ տալ non defensoribus istis tempus eget և լաւ հաշուի առնել իւր ուժերի քանակը, որը ստիպում է միայն

հանդիստ և խաղաղութիւն վայելել։ Աւելի վաղ ասել էր նա. «Երբ այս աշխարհի զօրեղները արբած դրութեան մէջ են գտնուում, առաջացած լինի այդ դրութիւնը վերին ներշնչումից, թէ ուրիշ պատճառներից, իւր կաչուց վախեցող դաճանին պէտք է խորհուրդ տալ վէճի չխառնուել»։

Այս խօսքերի մէջ շատ պարզորոշ և գունեղ կերպով նկարուած է Կանտի բնաւորութեան թուլութիւնը, որ քիչ վերև ուրիշ կերպ էր արտայայտել, այն է—«մի բան որ չեմ մտածում, այդ երբէք չեմ արտայայտի, սակայն այդ չի նշանակում թէ այն բոլորը, որ մտածում եմ, վստահութիւն կունենամ արտայայտելուց։ Կանտը չի պատկանում այն բնաւորութիւններին, որոնք բուռն ձգտում են զգում կռուելու, մաքառելու, ինչպէս Լեսսինգը կամ Բազեդովը, Լուտերը կամ Բրունոն։ Սա մի համեստ գիտնական էր, որ իւր մաքերի ներքին զարգացման համար էր ապրում։ Աղմուկն ու վէճը սաստիկ դժկամակութիւն էին պատճառում նորան և նա ատում էր նոյն իսկ գիտական պայքարը։ Ինչ որ չէր կարող համակերպել իրեն՝ անոր ինքը պատրաստ էր զիջանելու։ Այն երկչոտութիւնը, որով նա աչքի էր ընկնում իւր մանուկ հասակում, նորա մէջ որոշ չափով մնաց ընդ միշտ։

Սակայն նոյն ինքն Կանտը 1766 թ. Մենդելսոնին գրած, յաճախ յիշատակուող մի նամակում հետևեալ գիտողութիւնն է անում իւր բնաւորութեան մասին. «Թէկուզ ինչպիսի պակասութիւններ էլ լինին, որոնցից չի կարող խուսափել նոյնիսկ ամենաանկուն վճռականութեան տէր անձը, այնուամենայնիւ երբէք չեմ ընկնի յեղյեղուկ, արտաքին փայլի վրայ հիմնուած տրամադրութեան ներքոյ, այն էլ այժմ, երբ կեանքիս մեծ մասի ընթացքում սովորել եմ խոյս տալ այն բոլորից, ինչ որ սովորաբար փչացնում է բնաւորութիւնը»։ Այս խօսքերի մէջ ամբողջապէս արտայայտուած է Կանտի բնաւորութեան երկրորդ ամենահիմնական կողմը՝ կամքի ուժը։ Բարեբախտաբար որքան թոյլ էր բնաւորութեամբ, կրկնապատիկ զօրեղ էր կամքով։ Սա մի մարդ է, որ իւր կամքովն է դարձել այն, ինչ որ էր։ Նա ամբողջ իւր կեանքը ղեկավարում է որոշ հիմնական սկզբունքներով, որոնք վերաբերում են ինչպէս բարոյականին՝ այնպէս էլ առողջապահութեան, սնունդութեան։ Կեանքի մէջ նա միանգամայն հակապատկերն էր Ռուսսոյի, որից նա գրաւուած էր, որպէս հեղինակից։ Ռուսսոն կամազուրկ կերպով իւր բնութեանն էր անձնատուր լինում, աչքի ընկնելով դէպի սանձարձակ ու շրջմոլիկ կեանքն ունեցած սաստիկ հակումով։ Սա մի բոշայական բնաւորութիւն էր, մինչդեռ Կանտը կարգ ու կանոն սիրող և այս վերջինս նորա մէջ նոյն իսկ բծախնդրութեան էր հասնում։ Կանտը ոչինչ չէր թողնում տրամա

դրութեան կամ պատահականութեան տնօրինութեան։ Բանականութիւնը նոցա համար ամեն ինչ էր, մինչ բնութիւնը միմիայն բանականութեան գործունէութեան համար նիւթ մատակարարող (substrat)։ Կանտը, ակներև է, որ իրեն է օրինակ բերել իւր բարոյական փիլիսոփայութեան մէջ. կատարեալ մարդ նա է, ով բանական կամքի տէր է և գործում է հիմնական սկզբունքներով առաջնորդուելով։ Գուցէ կարելի լինի ասել, որ Կանտի բարոյականութեան և առհասարակ պրուսացոց հասարակական կարգերի մէջ մի ներքին ցեղակցութիւն կայ. կեանքին որպէս ծառայութեան նայելը, ամեն բան կարգ ու կանոնի տակ դնելու սէրը, դէպի մարդկային բնութիւնն ունեցած անվստահութիւնը—այս բոլորը պրուսական ընդհանուր գծեր են։

Շատերը Կանտին Սոկրատի հետ են համեմատում։ Այդ համեմատութեան մէջ ճշմարտութիւնը իւր արժանաւոր մասն ունի։ Նոցա բնաւորութեան և մտածողութեան մէջ նմանութիւն կայ։ Այս երկու անձնաւորութեանց էլ հիմնական գիծը տրամադրութեան անկախութիւնն է. միանգամայն գործի մէջ խորասուզուած, զբաղուած իրենց կեանքի էական խնդրով՝ նոքա անտարբեր են դէպի արտաքին յաջողութիւնները։ Նոցա մէջ իշխողը ներքին կոչման ձայնն է, իսկ ընդհակառակն արտաքին դիրքն ու ազդեցութիւնը նոցա համար ոչ մի նշանակութիւն չունի։ Այդ վերաբերում է մինչև անգամ նոցա ունեցած գրական յաջողութիւններին։ Սոկրատէսը այդպիսի յաջողութիւնների յետեւից չի ընկել, իսկ Կանտը 60 տարեկան էր արդէն, բայց իբրեւ հեղինակ ոչ մի ազդեցութիւն չունէր և ինչ որ էլ յետոյ ձեռք բերեց, այդ էլ առանց իւր կողմից առանձին մի ջանք գործ դնելու, ինչպէս անում են սովորաբար ուրիշները ընթերցողի տրամադրութիւնը վաստակելու համար զանազան միջոցներ գործ դնելով։ Արդէն վերևն էլ յիշուեցաւ, որ չկայ մի գրուածք, որի մէջ ընթերցողը այնքան անուշադրութեան մատնուած լինի, ինչպէս այդ եղել է Կանտի «Զուտ բանականութեան քննութեան» մէջ։

Նոյնչափ նման է նոցա մտածողութեան ձեւը և ուղղութիւնը։ Այդ նմանութիւնը կայ նոցա՝ ինչպէս մի բան հաստատելու, այնպէս և բացասելու մէջ. երկուսին էլ յատուկ է մտքի իւր տեսակի մի բացասող գիծ, որ նոքա ուղղում են առաւելապէս ճոռում գիտնականների և մեծամիտ մտահայեցողութիւնների (speculation) դէմ և մի առանձին սիրով հեգնական տոն են ընդունում, երբ խօսքը պարծենկոտ իմաստուններին է վերաբերում. «Ոչ միայն Աթէնքի, այլ նաև գիտութեան շուկայում ինձ համար շատ անպէտք բաներ կան», ահա այն տրամադրութիւնը, որով Սոկրատէսը երես էր շրջում Աթէնքի

սոփեստների նորաձև գիտութիւններից և բնագէտների վաղանցուկ մտքերից։ Նա այդ մտքերին ծանօթանում էր այն չափով, ինչ չափ բաւական էր համարում համոզուելու, որ այդ մտքերը յիրաւի անօգուտ են գլխաւոր խնդրի նկատմամբ և չեն կարող մարդու արժանաւորութեան և բախտաւորութեան վրայ էական ներգործութիւն ունենալ։ Սոկրատի նման Կանտն էլ երիտասարդ հասակում սաստիկ դրաւում էր տիեզերաբանութիւնից ու մետաֆիզիկայից։ Ապա հետևեց նորա օրինակին, «որը մտահայեցողութիւնների նկատմամբ ստեղծեց բացառող փիլիսոփայութիւնը, այսինքն վարդապետեց բաղմաթիւ կեղծ գիտութիւնների անօգտակարութեան և մեր իմացութեան սահմանների մասին»։ Ամեն փայլփլուն և ակնահաճոյ բաներ գիտենալը և անոնցով հոգին հարստացնելը չեն կազմում իսկական արժէք տուողները, այլ հեղ առաքինութիւնները, որոնցով նոյն իսկ աննշան մարդը գերազանցում է իշխանազներին և գիտուններին։ Կանտը Սոկրատից պակաս չէ հեգնում այն մեծ մարդկանց, որոնք կարողանում են ամբոխի զարմանքն յարուցանել իրենց «բարձր իմաստութեամբ»։ Նա իւր հեգնութիւնը դարձնում է նմանապէս դէպի այն մեծ բնազանցագէտները, որոնք մտահայեցողութեան բարձր աշտարակների մէջ են բնակւում, «որոնց շուրջը սաստիկ քամի է փչում», և նոցա անուանում է «գիտնականութեան կիկլոպներ», որոնք իրենց յետևից քարշ են տալիս գիտութեանց անչափ ծանրութիւնը, բայց գործածել չեն կարողանում երբէք։ Նոցա «կիկլոպ» է դարձնում ոչ թէ իրենց ուժը, այլ միականիութիւնը, որով ունէ խնդրի վրայ միշտ միակողմանի էին նայում։ Սոկրատի հետ Կանտն էլ մտածում է, որ իմաստութիւնը գիտութիւնից բարձր է, որ իմաստութիւն կարող են ունենալ նաև քիչ բան իմացող մարդիկ, իսկ առաջին անհրաժեշտ պայմանն այն է, որ ճանաչեն իրենց տգիտութիւնը։ Կանտը փիլիսոփայի իսկական նպատակը մարդկանց մէջ իւրաքանչիւր տգիտութեան գիտակցութիւն զարթեցնելն է համարում։ Մերութեան հասակում նա պատրաստ էր այդ յատկութեան մէջ տեսնելու նոյն իսկ աստղաբաշխութեան արժէքը, որ երիտասարդ հասակում այնքան սիրում էր. «Աստղաբաշխների դիտողութիւններն և հաշուառութիւնները, ասում է նա «Զուտ բանականութեան» քննութեան մէջ մի նշանաւոր տեղում ,«չատ զարմանալի բաներ ցոյց տուին մեզ. բայց այդ բոլորի մէջ ամենակարևորն այն էր, որ մեր առաջ բաց արին մեր տգիտութեան անդունդը, որը մարդկային բանականութիւնը առանց այդ դիտելիքների երբէք չէր կարող այդպէս ահագին պատկերացնել։ Այդ դիտելիքների մասին խորհրդածելը ահագին փոփոխութիւններ պիտի առաջացնէ մեր՝ բանականութեան գործադրութեան վերջնական նպատակների մասին տուած որոշման մէջ»։ Այս

գիտական բացասող փիլիսոփայութեան հակառակ կողմը երկու փիլիսոփաների մէջ էլ նոյն դրական համոզումներից է կազմուած։ Ինչպէս Սոկրատը սոփեստների սկեպտիցիզմի դէմ դրեց տրամաբանութիւնը սահմանումների ձևով, բարոյականութիւնը՝ որպէս բարու մասին խղճի միջոցաւ ձեռք բերած գիտութիւն, կրօնն էլ հաւատի ձևով աստուածայինին համադրեց, այնպէս էլ Կանտը սկեպտիկիզմին հակադրում է իւր իմացաբանական ռացիոնալիզմը, ֆրանսիական փիլիսոփաների թեթևսոլիկ սանձարձակութեան դէմ—նահապետական բարոյականութիւնն և բարձր անձանց ու պալատական անաստուածներին՝ առաջարկում է բանականութեան գործնական հաւատը։

Աւելացնենք մի քանի անկախ բնորոշ կողմեր էլ և ահա ծանօթացած կլինենք Կանտին, որպէս անձնաւորութեան, որպէս մտածող—փիլիսոփայ—հեղինակի։

Նորա վերջին գրուածքների շարադրելու արտաքին ձևը և ընդհանրապէս բնաւորութիւնը սխոլաստիկ է։ Այդ մասին աւելի որոշ գաղափար կազմած կլինենք, եթէ համեմատենք նորան Շոպէնհաուէրի հետ։ Մինչդեռ Շոպէնհաուէրը կանգ է առնում իրերի առաջ բանաստեղծի նման և սիրում նոցա մերկացնել իւրեանց գաղտնիքները, Կանտը մերձենում է անոնց իւր մի տեսակ իշխանասէր բռնադատող դատողութեամբ և ահա կտեսնենք թէ որքան անտրամադիր էր նա իւր մտքերի որոշ հակառակ դրութեան հանդիպելու։ Նորա բանականութեան այդ բռնադատող կողմը չատ պարզ արտայայտւում է ուրիշի մտքերի նկատմամբ ցոյց տուած անհանդուրժ վերաբերմունքի մէջ։ Այդ ուրիշի մտքերը նա պատրաստ է իսկոյն իւր մտքերին համապատասխան ձևակերպելու և կամ բոլորովին մերժելու՝ երբ առաջինը անհնար է։ Ասում են, որ մասնաւոր կեանքում նա մեծ դժկամութեամբ էր խօսում փիլիսոփայական հարցերի մասին, այն դիտակցութեամբ թէ ինքը ընդունակ է աւելի ուսուցանելու քան լսելու։ Նոյն բնաւորութիւնն ունի և որպէս հեղինակ. նա չէ կարողանում ուրիշին լսել։ Ամենաբազմակողմանի կերպով քննել, վերահասու լինել իւր մտքերին նա պատրաստ է, բայց ոչ երբէք ուշադրութեամբ կարդալու և վերաբերուելու ուրիշի փիլիսոփայական գրուածներին։

Հին և նոր փիլիսոփայութեան մասին Կանտի ունեցած ծանօթութիւնը ամենևին թերի չէր և Կանտը յաջողութեամբ էլ օգտուում է այդ ծանօթութիւններից, սակայն կամ իւր գաղափարներին յարմարեցնելու նպատակով կամ եթէ այդ չի լինի՝ հակահաւելու։ Նորա բնաւորութեան այդ կողմին անխտիր կերպով ենթարկուել են Լայբնիցը, և թէ Վոլֆը, Իւմը և թէ Բերկլին։

Չեն աղատուել նաև նորան հակաճառող ժամանակակիցները— Ֆետտերն ու Էբերհարդը։ Իզուր կլինէր Կանտից՝ նոցա յայտնած կասկածներին կամ հակաճառութիւններին ուշադիր վերաբերմունք ապասել։ Նա լսել և հասկանալ չէր կարող իրեն հակաճառողներին. նա նոցա մէջ իւր ասածների միմիայն հակասութիւնն էր տեսնում և կարուկ կերպով բարձրացնում էր իւր ձայնը, որպէսզի միանգամ էլ կրկնէ իւր ասածները որպէս միակ ճշմարտութիւն, և որովհետև չէր կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարող են իւր մտքերը համոզիչ չլինել, ուստի հնչմամբ հակառակորդներին էր մեղադրում դիտաւորեալ անհասկացողութեան և իւր գաղափարները դիտմամբ աղճատելու համար։ Այդ տեսակ նախատինքի արժանացել են նաև իւր աշակերտներից Բերկն ու Ֆիխտէն։ Քանի դեռ նոքա բաւականանում էին Կանտի փիլիսոփայական համակարգութիւնը վերլուծելով և իւրացնելով, միշտ նորա քաջալերութեանն էին արժանանում։ Այդպէս էր անում նորա առաջին մեկնաբան Շուլցը և Կանտն էլ սրան էր իրեն միակ հաւատարիմ անձն համարում. իսկ հէնց որ սկսում էին մի քիչ ազատ և ինքնուրոյն կերպով զարգացնել մտքերը, կամ նորից ձևակերպել, նա վճռականապէս նախատում էր նոցա ասելով. «Զ. Բ. Քննութիւնը» պէտք է բառացի հասկանալ և ոչ թէ անոր կարծեցեալ ոգու վրայ հիմնուած»։ Նոյն իսկ նա նոցանից երես դարձրեց անվստահութեամբ և հակակրութեամբ, որպէս կեղծ բարեկամներից և այդ բանը պարզորոշ կերպով արտայայտեց հրապարակով։

Այս բոլորի մէջ պարզ երևում են մտքերի մի տեսակ քարացման նշաններ, որ ընդհանրապէս յատուկ է ծերութեան և որը սակայն Կանտի մէջ համեմատաբար շատ աւելի վաղ նկատելի եղաւ։ 1790 թ. Հերցին գրած մի նամակում նա հետևեալ ձևով է արդարանում, որից երևում է, որ ծերութիւնը խանդարում էր նորան ուրիշների մտքերից օգտուելու. «Ես ստիպուած եմ անձնատուր լինելու սեփական մտքերիս ընթացքին, որ տարիների ընթացքում իւր համար որոշ հուն (русло) է հարթել»։ Կանտի այդ շրջանի հեղինակութիւնների մասին Ադեկէսը հետևեալ ձևով է խօսում։ «Մտքերը հաստատուն կերպով բարդուել էին նորա ուղեղի մէջ, և նա բոլորովին մեքենայօրէն միմիայն քաղում էր այնտեղից առանց նոր գաղափարներ կամ իդէաներ ստեղծելու։ Նա նման է նուագող ժամացոյցի, որը երբ լարուում է, սկսում է հարիւր անգամ նուագած եղանակները կրկին նուագել»։ Կանտի մտածողութիւնը քարանալով՝ դադարել էր նաև թարմ տպաւորութիւններ ստանալուց։ Մեծ եռանդով և հաստատամտութեամբ քննում, կշռադատում էր որոշ պրոբլեմներ, սակայն այդ բոլորը անում էր արդէն միանգամ դրուած, հաստատուած մեթոդ-

ներով. այս վերջին 25 տարուայ ընթացքում այլևս նոր մտքերը նրա վրայ ոչ մի ազդեցութիւն չէին անում։

Կառավարութեան հետ ունեցած վերոյիշեալ ընդհարումից յետոյ, 1796 թ. սաստիկ և անսպասելի հոգեկան ուժերի յանկարծական սպառում տեղի ունեցաւ։ Կանտը ստիպուած էր դադարեցնել դասախօսութիւնները և աստիճանաբար ենթարկուեցաւ ծերախտի։ Նա դեռ էլի նստած էր դրասեղանի առաջ իւր գրիչը շարժում էր թղթի վրայ, միտքը անզօր և անապահով կերպով թափառում էր, դուրս չգալով իւր նախկին շաւղից։

Այդ վիճակի սկզբնական շրջանը Կանտը նկարագրել է Գարվէին գրած իւր մի նամակում, որ չի կարելի կարդալ և չյուզուել։ Գարվէն, որ տանջւում էր անբուժելի հիւանդութեամբ—երեսի քաղցկեզով, իւր մահուանից ոչ շատ առաջ նուիրեց Կանտին իւր վերջին հեղինակութիւնը—«Բարոյագիտութեան ամենակարևոր սկզբունքների համառօտ ակնարկ» խորագրով և առանձին նամակով խնդրեց գրքի մասին կարծիքներ յայտնել։ Կանտը իսկոյն պատասխանեց 1798 թ. Սեպտեմբերի 21-ին. «Շտապում եմ յայտնել Ձեզ՝ Ձեր գրաւիչ և հոգեկազդոյր գիրքն ու նամակը ստանալուս մասին։ Ձեր մարմնական տանջանքների սրտաճմլիկ նկարագրութիւնը, միւս կողմից այն հոգեկան կորովը, որով դուք դասում էք այդ տանջանքները նախկին աշխուժութեամբ աշխարհի բարօրութեան համար աշխատելու՝ իմ մէջ ամենամեծ զարմանքն են յարուցանում։ Գիտեմ, ճշմարիտ, ինձ վիճակուած բախտը Ձեզ աւելի տխուր չի թուայ արդեօք. ֆիզիքապէս բաւականին առողջ լինելով հանդերձ, ինձ թւում է, որ հոգու կաթուած եմ ստացել։ Ես Տանտալոսի [1]) տանջանքներն եմ կրում, տեսնելով որ ամբողջ փիլիսոփայութեան վերաբերեալ հարցերը պէտք է մի վերջնական եզրացութեան բերուին ու լրացուին, իսկ ես այդ դեռ չեմ արել

---

[1]) Ցուցական մի առասպել է, որ Լիդիայի կամ Ֆրիգիայի Տանտալոս թագաւորը չափազանց սիրելի լինելով չաստուածների հայր Արամազդին՝ աստուածների խնջոյքներին մասնակցելու մեծ շնորհին արժանացաւ, որով եւ հպարտացած սկսեց մի առանձին պարծենկոտութեամբ աստուածային գաղտնիքներ բանալ մարդկանց առաջ։ Աստուածները զայրացած նորան դժոխք ձգեցին յաւիտենական քաղցի ու ծարաւի ենթարկելով։ Պատմւում է, որ այնտեղ նա դրուած էր մինչեւ պարանոց մի շնակի մէջ, իսկ գլխի վերեւը՝ անուշահամ պտուղներով ծանրաբեռնուած մի ոստ էր կախած. հենց որ կամենում էր ճաշակել պտղից կամ ջրից խմել, իսկոյն թէ ոստը եւ թէ ջուրը հեռանում էին։ Թարգմ. փխդրչ։

թէպէտ և գիտակցում եմ, որ կարելի է անել»։ Այնուամենայնիւ նամակը վերջացնում է յայտնելով այն յոյսը, թէ «ուժերի այժմեան քայքայումը», որ սկսուել էր դրանից տարիներ առաջ, տեւական չի լինի։ «Այն խնդիրը, որով ես այժմ զբաղուած եմ, վերաբերում է բնագիտութեան բնապանցական սկզբնական հիմունքներից Ֆիզիկային անցնելուն։ Այդ խնդիրը պէտք է վճռուի, որովհետև հակառակ դէպքում քննական փիլիսոփայութեան համակարգութեան մէջ մի ճեղք մնացած կլինի։ Իմ բանականութիւնը չի դադարում այդ լուծումը պահանջելուց և իմ մէջ կայ նմանապէս այդ լուծման հնարաւորութեան գիտակցութիւնը, սակայն այդ յետաձգւում է կենսական ուժերիս եթէ ոչ միանգամայն սպառմամբ, գոնէ անոնց յաճախակի անկմամբ, և այդ իմ մէջ արտասովոր անհամբերութիւն է առաջ բերում»։

1804 թ. յունուարի 30-ին (ն. տ. փետ. 12-ին) ծերութեան և միայնակութեան իրեն հասցրած տանջանքների բաժակը դատարկել էր արդէն, երբ գիտասիրտ մահը տարաւ նրան։ Վերջին խօսքն էր «լաւ է» [1]), որով երախտագիտաբար հրաժարւում էր ծառայութիւն ընդունելուց։

Կանտը ութսուն տարեկան էր որ մեռաւ. այս հանգամանքը շատ մեծ նշանակութիւն ունի նորա գիտական փիլիսոփայական գործունէութեան համար, այն տեսակէտից, որ հազիւ թէ կարելի լինի գտնել այլ օրինակ, երբ մի փիլիսոփայ այդքան ուշ հասած լինէր իւր մտքերի վերջնական ձևակերպութեան և միայն այդ պատկառելի հասակում հանդէս գար որպէս զօրեղ մտածող և ազդեցիկ հեղինակ։ Եթէ Կանտը մեռած լինէր Սպինոզայի, Դեկարտի, Լեսինգի կամ Շիլլերի հասակում, հազիւ թէ յիշողութիւն պահպանուած լինէր այդ դէպքում նոյն իսկ նորա անուան մասին։ Երկարատև կեանք ունենալու մէջ կարելի է միայն բախտի գթասրտութիւնը տեսնել, որ պահպանեց նրան և թոյլ տուեց աւելի ապրել, քան թոյլ կտար նորան այդ իւր կազմուածքը։ Միւս կողմից էլ նորա գրուածքները բաւականին տուժել են շնորհիւ այդ հանգամանքի։ Անոնք առաջ չեն եկել նրա ուժերի ծաղկած շրջանում կամ կեանքի թարմութեան միջոցին, ուստի աչքի են ընկնում չափից դուրս հասածութեամբ։ Նախ քան քննադատական շրջանի գրուածքները գրական արժանաւորութիւնների տեսակէտից շատ աւելի բարձր են. այդ առանձնապէս կարելի է ասել վաթսունական թուականների հեղինակութիւնների համար։

Երկրաչարժի պէս ազդեց Կանտի փիլիսոփայութիւնը ժամանակա-

---

1) Es ist gut!

ՍՏԱՐԳՎԱԾ է 1971 թ.

կից և ընդհանրապէս ապագայ փիլիսոփայութեան վրայ,—ինչ որ մինչ այն ժամանակ հաստատ էր, այժմ սասանեց։ Ոմանք աշխատում էին թափթփած բեկորների վրայ նորից կանգնեցնել հին կամ հնի ճեղքուած պատերը նորոգել—իսկ ընդհակառակ ոմանք, աւելի մատաղ ուժերը,—Ռէյնհոլդ, Ֆիխտէ և նոր փիլիսոփաներից շատերը Կանտին հետևելով, միևնոյն ժամանակ իրենց ինքնուրոյնութիւնը չմոռանալով, աշխատում էին նոր ոճով նոր շէնքեր կառուցանել։ Շատ բնորոշ է և հետաքրքրական այդ տեսակէտից հին աշխարհայեցողութեան գլխաւոր պաշտպաններից մէկի՝ Ֆեստոնի ինքնակենսագրութիւնը, որի մէջ նկարագրում է թէ ինչպէս նա մինչև վճռական բոպէն բոլորից յարգուած ու սիրուած լինելով որպէս հեղինակ և դասախօս, յանկարծ ոչ միայն իրեն թողնուած տեսաւ ամբողջ երիտասարդութիւնից, այլ և բաց է ի բաց իւր ընկերների արհամարհանքին ենթարկուեցաւ այն պատճառով, որ համարձակուել էր հակաճառել Կանտին, չհասկանալով նորան, այնպէս որ Ֆեստոնը ստիպուած էր հոգեկան թարմ ուժերի շրջանում թողնել Գէօթինգենի համալսարանը։

Կանտը իւր կենդանութեան ժամանակ ականատես եղաւ այս յեղաշրջման, իսկ մեռնելով՝ իւր հետ տարաւ ամբողջ գերմանական ժողովրդի երախտագիտութիւնն ու հմայկրութիւնը։ Առանձնապէս պատուեցին նրան հայրենի քաղաքն ու համալսարանը։ Գերմանական ոչ մի փիլիսոփայի մասին այնքան կենդանի յիշողութիւններ չեն պահուած, որքան Կանտի մասին։ Մայր տաճարում նրա գերեզմանի վրայ շինուած Stoa Kantiana-ն «Գործնական բանականութեան քննութիւնից» առած հետևեալ խօսքերն է կրում.

Աստեղազարդ երկինքը իմ գլխի վերև,
Բարոյական օրէնքը իմ սրտի մէջ։

Եւ յիրաւի այս խօսքերի մէջ նշանագրուած են նորա մտածողութեան երկու բևեռները—Տիեզերքը՝ ամենակատարեալ գիտութեան առարկան, որ և նորա երիտասարդութեան սիրած առարկան էր, բարոյական օրէնքը—վերջին և բարձրագոյն արժանաւորութեան առարկան, որ նորա ծերութեան հասակում գրեթէ միակ քաջալերանքն ոգևորութեան աղբիւր էր։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՏՐԱԴԱՐԱՆ
BIBLIOTEKA

[2n]

A II 66922

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

220066922